

1013

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱՐՐԵՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ



Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆիկնանկոյս Եօզուշու, Կ. Պոլիս.

1895







Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

---

ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ

Գործնական Քերականութիւն

ե՛հ

ՃԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱՐՐԵՐ

---

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

---

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ



Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսներու Եօզուշու, Կ. Պոլիս.

—  
1895

1013



ՏՊԱՐԱՆ ՎԻՄԱԳՐԱՐՈՒՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

### Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսերու Եղանակ, Կ. Պոլիս

---

معارف عمومية نظارت جلیله سنک رخصتنامه سبیلہ طبع اولیٰ منشدر



## Յ Ա Ի Ա Չ Ա Բ Ա Ն



Իբրեւ յառաջարան կ'ուզէի գրել միայն սա բառերը  
— Փորձեցիք այս Քերականութիւնն ալ : Սակայն ոմանք  
որ ձեռագիրը տեսան, ըսին թէ անհրաժեշտ է յառաջա-  
քան մը գրել, վասնզի այս գործը այնքան նոր է իր  
տեսակին մէջ, որ կրնայ յեղաշրջում մը նկատուիլ քե-  
րականական ընդհանուր գրութեան :

Ուստի կը գրեմ սովորական յառաջաբանը, բայց միշտ  
նոյն համոզումը պահելով թէ ո՛ր եւ է ուսուցիչ որ յանձն  
կ'առնէ աչքէ անցընել զայն՝ պիտի ըմբռնէ գործին ուղ-  
ղութիւնը, առանց ո՛ր եւ է բացատրութեան :

Երբ հրապարակին վրայ աւելի կամ նուազ խնամով  
պատրաստուած այնքան քերականութիւններ կը գտնուին,  
մեր Քերականութիւնը՝ որուն առաջին մասը միայն կը  
տեսնուի այս հատորին մէջ, եւ որ վերջէն կուգայ կը  
մտնէ առաջիններուն կարգին մէջ, թէ՛ ըսենք եւ թէ՛  
չըսենք, ինքնին կ'ենթադրէ առաւելութիւն անոնց  
ամենուն վրայ :

Պիտի չի համարձակէի այսքան յաւակնութիւն ցոյց  
տալ իմ ներկայ աշխատութեանս մասին, եթէ ես ինքս  
գտած ըլլայի այն մեթոտը եւ ուղղութիւնը որուն հե-  
տեւած եմ դասագրքիս բոլոր ընթացքին մէջ : Անոր  
սկզբնաւորութիւնը արդէն տարիներ առաջ թէրզեան



ըրած է: Ես առաջնորդուած եմ երկու յոյժ հոյակապ գործերէ (1), որոնք անգլիախօս ուսանողներու օրուան դասագիրքերն են, թէեւ անձնական փորձառութիւն եւ աշխատանք մեծ բաժին մը ունեցած են անոր մէջ:

Այս կրկին դասագիրքերը՝ որ անգլիական եւ ամերիկեան բարձր ուսումնաւարտողներէն յանձնարարուած են պետական եւ նախակրթական ամէն կարգի դպրոցներուն, պատրաստուած են մանկավարժական ամէն պահանջուած պայմաններուն համաձայն: Ասոնք սովորական քերականութիւններուն պէս լեցուն չեն լեզուի շոր ու ցամաք կանոններով, այլ հիմնուած են բնութեան մէթոտին վրայ, որ ըստ Պ. Մարսէլի, «մեթոտներուն ամէնէն բարձր տիպարն է», անոնք կը արամադրեն գործնականէն տեսականին երթալ, մասնաւորէն հանրականին, լեզուէն կանոններուն, ինչպէս Սթենսըր կը պահանջէ:

Սոյն տիպար դասագիրքերէն ներշնչուած՝ պատրաստած եմ Աւստրալիայի Գործնական Քերականութիւնս, որուն նպատակն է լեզուին նիւթը ներկայացնել դեռահաս տղայոց առջեւ՝ մարմնացեալ կամ առարկայացեալ ձեւի տակ, փորձական վարժութեամբ, տարրերով քան կանոններով: Հոս աշակերտը դէմ յանդիման բերուած է նոյն իսկ կենդանի լեզուին, զոր իր խաղալիքներուն պէս կը գործածէ ամէն կողմ դարձնելով, ամէն ձեւի փոխելով: Քերականութիւնը ձեռք առած օրէն կը սկսի բառերը ձանչնալ եւ գործածել, նախադասութիւններ շինել:

Այս դասագիրքին ներքին արժանիքը կազմող մէկ նշանակելի տարրն ալ սա է որ ուսանողը ոչ միայն բառերուն կը ծանօթանայ շատ բնական եւ հաճելի ձամբով

(1) Essentials of English Grammer, by Prof. Whitney.  
Swinton's Language Primer.



այլ եւ կ'ըմբռնէ անոնց իրական արժէքը եւ բնութիւնը ,  
 կը հասկնայ բառերուն պաշտօնները կամ դերերը՝ զորս  
 կը կատարեն անոնք խօսքի կազմութեան մէջ . մէկ խօս-  
 քով , կը սորվի քերականութեան փիլիսոփայութիւնը ,  
 կամ քերականութիւնը իբր փիլիսոփայութիւն , որով  
 միտքը կը մշակուի գիտողութեամբ : Այս ընթացքով ,  
 ուսանողները շատ կանուխ կը սկսին շարադրութեան եւ  
 գրաւոր ու բերանացի բառազննութեան կամ վերլուծու-  
 թեան վարժութիւններու , ոչ թէ անդիտակցաբար , այլ  
 դատողութեամբ , որով քիչ ժամանակի մէջ կը տիրանան  
 լեզուին . եւ այս ամէնը անզգալի կերպով , հետաքրքրա-  
 կան եւ հաճելի եղանակով մը :

Ներկայ գործիս ամբողջութիւնը երեք շրջաններու  
 բաժնուած է , ինչ որ դասագրքին մէկ նորութիւնը կը  
 կազմէ , եւ որուն ընձեռած օգուտները հետզհետէ փոր-  
 ձով պիտի տեսնուին :

Առաջին Շրջանին մէջ ուսանողը պիտի ծանօթանայ  
 սոսկ բառերուն եւ անոնց կատարած պաշտօններուն ,  
 նաեւ նախադասութեան բնութեանը , առանց սորվելու  
 մանրամասնութիւնները . զորօրինակ , պիտի ծանօթանայ  
 թէ ի՞նչ է անունը եւ ի՞նչպէս խօսքի մը մասը կը կազմէ :  
 Եթէ աշակերտ մը հարկադրուի թողուլ դպրոցը մինչեւ  
 իսկ միայն այս մասը աւարտելէն վերջը , պիտի կրնայ  
 իրեն հետ տանիլ բաւական հիմնական եւ կարեւոր ծա-  
 նօթութիւններու պաշար մը նկատմամբ նախադասու-  
 թիւններու կազմութեան եւ զայն բաղկացնող մասերուն  
 — բառերուն :

Երկրորդ Շրջանին մէջ կ'աւանդուի մասունք բանի-  
 ներու ստորաբաժանումը կամ տեսակները՝ ճիշդ այն  
 կարգով որով դասաւորուած էին առաջին շրջանին մէջ .  
 զորօրինակ , թէ քանի՛ տեսակ անուն կամ բայ կայ եւ այլն :



Այս շրջանին մէջ աշակերտները ոչ միայն աստիճանաբար նոր ծանօթութիւններ պիտի ստանան բառերու տարբեր տեսակներուն վրայ, այլ եւ անդամ մը եւս պիտի յիշեն ինչ որ սորված էին նախորդ շրջանին մէջ, եւ սորվածնին այս կերպով աւելի խորունկ պիտի տպաւորուի իրենց մտքին վրայ:

Երրորդ Շրջանին ընթացքով ուսանողը պիտի մտնէ քառերուն կրած փոփոխութեանց մէջ. զորօրինակ, թէ ինչպէս անուն մը իր սկզբնական վիճակէն ելլելով տարբեր ձեւեր կ'առնէ խօսողին մտքին համեմատ: Հարկ չի կայ կրկնել թէ այս վերջին մասը եւս պիտի նորոգէ եւ թարմացնէ աշակերտին յիշողութեան մէջ արդէն ամբարուած գիտելիքները: Սոյն երեք շրջաններուն իւրաքանչիւրը առանձին հատորիկի մը մէջ ամփոփեցինք, քանզի փորձով գիտենք թէ այս կերպը ուսանողներուն շատ հաճելի է:

Կը վերջացնեմ անով որով սկսայ յառաջաբանս. — Այս դասագիրքն աչ փորձեցեմ: Չեմ կարծեր թէ հեղինակ մը կը զլանայ նուիրել օրինակ մը ո՛ր եւ է ուսուցչի որ յանձն կ'առնէ քիչ մը ժամանակի զոհողութիւն գէթ աչքէ անցընելու համար զայն:

Իցի՛ւ թէ այս աննշան գործով քիչ մը օգնած ըլլայի մայրենի լեզուի կրթիչներուն, եւ դիւրացուցած ըլլայի ուսանողներու աշխատութիւնը:





## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

Հետեւեալ թելադրութիւնները ուսուցիչներուն ու-  
ճադրութեանը կը յանձնուին :

1. Խղճամիտ ուսուցիչ մը իր սաշիֆ իւրաքանչիւր  
դասը նախապէս պատրաստելու է, որպէսզի շաւ ընթռնէ  
թէ ի՛նչ է դասին նպատակը եւ թէ ի՛նչ ճամբով ուսա-  
նողը առաջնորդուած է անոր : Երանի՛ այն աշակերտ-  
ներուն որ իրենց դասերը հաւասարմաբար պատրաստող  
դասասուներ ունին :

2. Դասագրքիս բոլոր ընթացքիւ մէջ ուսանողին  
ձեռքը տրուելու են յարմար ընթերցարաններ, զորս ու-  
սուցիչը օգտակար կերպով պիտի գործածէ իբրեւ օժան-  
դակ այս ֆերականութեան :

3. Քերականութեան մէջ գրելու համար առա-  
ջարկուած նախադասութիւնները դասի ժամանակ ու-  
սուցիչը պատի տալուսակին վրայ գրելու է, կամ ուսա-  
նողներին մեկուն գրել տալու է, եւ ստորուն կամ  
կէտերուն սխալները արքագրելէ կամ արքագրել տալէ  
էտքը դասին թելադրած դիտողութիւնները ընելու է :

Էջ 20 Տող 6. կարդայ—Աղաւնիկ | կը թռչի :

» 25 » 10. » —Փոքրիկ աշխատասէր | տղան | Կը  
կարդայ :

» 28 » 7. » —Վարժապետը | բերնուց սորվեցուց  
թուարանութիւնը :







ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԻԵՐ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ



ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ ԿԱՄ ԲԱՌԵՐ



ԴԱՍ Ա.



ՆԵՐԱԾԱԿԱՆ . — ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

1. (Եթէ հարցո՞ւի +եղի) Ժամացոյցը ի՞նչ կ'ընէ :  
(Կը՞նաս պատասխանել) Ժամացոյցը կը զարնէ :
2. (Դարձե՞ալ) Ժամացոյցդ ո՞ւր է :  
(Կը՞նաս ըսել) Ժամացոյցս գրպանս է :
3. Հայրդ ո՞վ է : . . . (1) Օղը ի՞նչպէս է : . . .

(1) . . . Այս կէտերը կը ցուցնեն թէ աշակերտները սոյն հարցում-ներուն պատասխան տալու են .



4. Բան մը ըսէ զանգակին վրայ :

— Զանգակը կը հնչէ :

5. Բան մը ըսէ աչքիդ վրայ , գրքիդ  
վրայ : . . .

6. Խորհէ թռչունին վրայ , և ըսէ խորհածդ :

— Թռչունը կ'երգէ :

7. Բան մը ըսէ գուլպայիդ վրայ , ֆէսիդ  
վրայ : . . .

8. « Հանդերձս աղտոտ է » : Ի՞նչ բանի վրայ  
խորհեցայ , ի՞նչ ըսի հանդերձին վրայ : . . .

Գիտողութիւն. — Այսպէս այլեւայլ բաներու  
վրայ կրնամ խորհիլ բան մը և ըսել . —

Մեր տունը փայտաշէն է : Արեւը մարը մտաւ :  
Դրացի սիկիւնը մեր տունը եկաւ :

Գիտելիք. — Վերոյիշեալ օրինակներուն իւրա-  
քանչիւրը նախադասութիւն կ'ըսուի , քանզի բանի  
մը վրայ խորհուած ու բան մը ըսուած է :

9. Ի՞նչ է նախադասութիւն :

— ՆԱ.ԽԱ.ԴԱ.ՍՈՒԹԻԻՆ կը կոչենք երբ բանի  
մը վրայ կը խորհինք եւ կ'ըսենք բան մը :

---

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 1 .

Ա. Նախադասութիւններ շինէ ըսելով թէ ի՞նչ կ'ընեն  
հետեւեալ անասունները :



ՕՐԻՆԱԿ. — Արժիւը կը թուչի :

- |                 |  |                 |  |                  |
|-----------------|--|-----------------|--|------------------|
| 1. Արժիւը . . . |  | 3. Կովը . . .   |  | 5. Աղաւնին . . . |
| 2. Հաւը . . .   |  | 4. Կատուն . . . |  | 6. Շունը . . .   |

Բ. Բան մը խորհէ եւ ի գիր առ. — Մաղիկ, պար-  
սեզ, շուսին, բոյս մը, կենդանի մը :

---

ԴԱՍ Բ.

ԲԱՌ

1. Ի՞նչ կը խորհիս դպրոցիդ վրայ :  
— Մեր դպրոցին մէջ շատ գիրքեր կան :
2. Ի՞նչ անուն կուտաս այդ խորհածիդ ու  
ըսածիդ . . . .
3. Նախադասութիւն մը շինէ Աստուծոյ վրայ :  
— Ասուած բարի եւ ամենիմաս է :
4. Սոյն նախադասութիւնը կազմող տարրերը  
որոնք են :  
— Ասուած, բարի, եւ, ամենիմաս, է :
- Գիտելի՞ք. — Ասոնք բառ կը կոչուին :
5. Ուրեմն ի՞նչ է բառ :  
— Նախադասութիւն մը կազմող տարրերը  
ԲԱՌ կը կոչուին :



Հ Ր Ա Հ Ա Ն Գ Զ .

Ա . Գրէ քսան բառեր :

Բ . Հետեւեալ բառերով երկու նախադասութիւններ  
կազմէ :

Շաս , ամսոս , կ'ըլլայ , ձմեռ , սաք , ցուրս :

Դ Ա Ս Գ .

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

1. Նախադասութիւն մը կազմող տարրերը որոնք են : . . .

2. Հետագայ բառերը նախադասութիւն մը կազմած են . —

Մը ծոյլ տղայ երեք աղջիկ կերսաւ մը քիչ միս : . . .

3. Ինչո՞ւ չեն կազմած :

— Քանզի խորհուրդ մը չեն յայտնուր :

4. Ինչո՞ւ խորհուրդ մը չեն յայտնուր այս բառերը :

— Քանզի ուղիղ շարուած չեն :

5. Կրնա՞ս յիշեալ բառերը ուղիղ շարել որ խորհուրդ մը յայտնեն : . . .



Գիտողութիւն. — Ասկէ կը հետեւի թէ կարգ մը բառեր իրարու քով բերելով նախադասութիւն մը չի կազմուիր առանց խորհուրդ մը յայտնելու :

6. Երէկ պզտիկ կասնու մը . — Նախադասութիւն չէ այս : . . .

7. Ինչո՞ւ . ուղիղ շարուած չէ այս :

— Ուղիղ շարուած է, բայց խորհուրդ յայտնուած չէ :

8. Ի՞նչ է ասոր թերութիւնը : — Լրացուր : . . .

Գիտողութիւն. — Ուրեմն կարգ մը բառեր թէեւ ուղիղ շարուած ըլլան, երբ լման իմաստ չեն յայտներ՝ նախադասութիւն չեն կազմեր :

Գիտելիք. — Նախադասութիւնները այնպէս կազմելու է որ խորհուրդները ուղիղ արտայայտեն :

Այս ուսուսը աւանդող գիրքը ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ Է :

---

### ՀՐԱՀԱՆԳ 3 .

Ա. Ընթերցարանի դասիդ մէջ նախադասութիւններ գտիր :

Բ. Ըսէ թէ ի՞նչ բանի վրայ խորհուած է եւ այն բանին վրայ ի՞նչ ըսուած է :

Գ. Գրասեղանիդ վրայ խորհէ եւ բան մը ըսէ գրով :





## ԳԱՍ Դ.

### Գ Ի Ր

1. Ի՞նչ է բառը . — ըսէ բառ մը : . . .
2. Գրէ տախտակին վրայ «իմաստուն» . Ի՞նչ տառերէ կազմուած է այս բառը :  
— Ի, լ, ա, ս, ռ, շ, յ, ն, նի տառերէն :
3. Առանց գրելու ի՞նչպէս կը յայտնես նոյն գաղափարը — Իմաստուն :  
— Արտասանութեամբ :

Դիտողութիւն . — Ուրեմն գաղափարները երկու կերպով կը յայտնուին , ձայնով և գրով :

4. Գաղափարը տուր այն բանին որ ցերեկ ատեն երկնքին երեսը կը փայլի , ձայնով և գրով : Այն բանին որ գիշերները կը փայլի . . .

5. Գրով յայտնէ մտքիդ մէջ եղած գաղափարը այն բանին որով կ'ուտես , որով կը տեսնես . ձայնով յայտնէ գաղափարը այն բանին՝ որ ձեր պարտէզը կայ : . . .

Գիտելիք . — Կը տեսնուի որ գաղափար մը յայտնելու կամ , որ նոյնն է , խօսելու միջոցը ձայնն է , իսկ գործիքը լեզունն է : Գիրը ուրիշ բան չէ , բայց միայն ձայնին արտայայտիչ նշանը :



6. Ի՞նչ է գիրը :

— Չայնին արսայայտիչ նշանը ԳԻՐ կ'ըսուի :

7. Գիրերը քանիի՞ կը բաժնուին :

— Երկուքի, ձայնաւոր եւ քաղաձայն :

8. Որոնք են ձայնաւորները :

— Ա. Ե. Է. Ը. Ի. Ո. Օ :

9. Կրնա՞ս գրել կամ արտասանել բառ մը առանց ձայնաւորի : . . .

---

## ԴԱՍ Ե.

—

Ի Ր

1, (Դասապահն բռնելով թերտ մը, թրէշ մը Լայն)

Ի՞նչ է այս . — Գիրք . — Ա՞յս . — Գրիչ : — Ա՞յս .

— Չանգակ . Էլն :

2. Ի՞նչ կը կոչուին ասոնք :

— Իր :

3. Ի՞նչպէս կ'իմանանք այս իրերը :

— Չգայարանով :

4. Հիմա ուրիշ երկու իրերու անուն տամ, վիճի՞, ուրախութիւն . ասոնք զգայարանքով կը գիտցուին : . . .



5. Ուրեմն ի՞նչպէս կը ճանչնանք այս իրերը :  
— Անոնց վրայ խորհելով :

6. Ի՞նչ է իր :

— Որ եւ է բան որ կը գիտցուի զգայաւորանով  
կամ վրան խորհելով՝ կ'ըսուի ի՞ր :


Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ. 4 .

Ա. Կարգա ընթերցարանէդ մաս մը . ա՛ռ քանի մը  
նախադասութիւն . ըսէ թէ ի՞նչ բանի վրայ խորհուած է  
եւ ի՞նչ ըսուած է :

Բ. Տոյց տուր անոնց մէջ յիշուած իրերը :

Գ. Գրէ 10 իրեր , որոնք կ'իմացուին զգայարանքով :

Դ. Յիշէ 10 իրեր , որոնք կ'իմացուին վրան խոր-  
հելով :



ԴԱՍ 2.

ԻՐ ՑՈՒՑՆՈՂ ԲԱՌԵՐ

1. ( Դասարանէն դուրս մը անտէր ) Ի՞նչ է այս :  
— Գիրք :

2. Ի՞նչ անուն կը տրուի ասոր :  
— Իր :

3. Երբ կ'ըսեմ գիրք , ի՞ր է այս :

— Ոչ , իրիկ անունը , կամ , իր ցուցնող  
բառն է :



- 4. Գրէ տախտակին վրայ “Գիրք”, ի՞նչ է այդ :
- Այ, իրը ցուցնող բառն է :
- 5. Ըսէ բառեր որ իր ցուցնեն : . . .

**Հ Ր Ա Հ Ա Ն Ի Ք 5 .**

Ա . Ընթերցարանի դասից մէջ իր ցուցնող բառերը նշանակէ : Ո՞րը զգայարանքով կ'իմացուի, եւ ո՞րը վրան խորհելով :

Բ . Գրէ 20 բառեր որ իր ցուցնեն :

Գ . Գտիր անանկ բառեր որ իր չի ցուցնեն այլ տարբեր բաներ . Օրինակ . — Կերթամ, կը խաղամ, աշտօր, վաղը, շատ, վրայ, տակ, դռն, մեմֆ, եւ այլն :

**Դ Ա Ս Է .**

**Ն Ա Խ Ա Դ Ա Ս Ո Ւ Յ Ե Ա Ն Մ Ա Ս Ե Ր Ը  
Ե Ն Թ Ա Կ Ա Յ Ե Ի Ս Տ Ո Ր Ո Գ Ե Լ Ի**

Գրէ տախտակին վրայ “Ոչխարը” :

1 . Ի՞նչ է այս :

— Իրի մը անունն է :

2 . Ի՞նչ ընել պէտք է նախադասութիւն մը շինելու համար զայն :

— Բան մը ըսել պէ՛տք է նոյն իրի՛ն վրայ .

— “Ոչխարը կը մայի” :



**Դիտողութիւն.** — Ասկէ կը հետեւի թէ նախադասութեան մը մէջ երկու բան պէտք է. — իրի մը անունը, եւ բան մը ըսել անոր վրայ :

3. **Նախադասութիւն** մը քանի՞ մասերէ կը բաղկանայ և ի՞նչ են անոնք :

— Նախադասութիւն մը երկու մասերէ կը բաղկանայ. իրի մը անունը եւ անոր վրայ ըսուած բանը :

4. Սա նախադասութեանց երկու մասերը որոշէ. — “Ոչխարը կը մայէ”, “Զին կը վազէ”, “Վարդը կը բուրէ” : . . .

**Դիտելիք.** — Նախադասութեան այն մասը որուն վրայ բան մը ըսուած է՝ ենթակայ կը կոչուի, իսկ այն մասը որ ենթակային վրայ բան մը կ'ըսէ կը կոչուի Ստորոգելի :

5. **Ի՞նչ է ենթակայ :**

— **ԵՆԹԱԿԱՆ** է նախադասութեան մը այն մասը, որուն վրայ բան մը ըսուած է :

6. **Ի՞նչ է ստորոգելի :**

— **ՍՏՈՐՈԳԵԼԻ** է նախադասութեան այն մասը որ ենթակային վրայ բան մը կ'ըսէ :





## ԳԱՍ Ը.

### ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

1. Ո՞րն է ենթական և ո՞րն է ստորոգելին սահադասութեան մէջ — Ամսառը եկաւ :

“Ամսառը” ենթական է, “եկաւ” ստորոգելին :

Գիտելիք. — Երբ այսպէս սահադասութեան մը ենթական և ստորոգելին կ'որոշենք կամ զայն կազմող մասերուն կը բաժնենք, այս գործողութիւնը վերլուծութիւն կ'անուանենք :

2. Ի՞նչ է վերլուծութիւն :

— Սահադասութիւն մը կազմող մասերը որոշելու գործողութիւնը կ'ըսուի վերլուծութիւն :

3. Վերլուծութիւնը քանի՞ կերպով կ'ըլլայ :

— Երկու. բերանացի եւ գրաւոր :

4. Ո՞րն է բերանացի վերլուծութիւնը :

— Երբ սահադասութիւնը բերնուց կը վերլուծուի կ'ըսուի բերանացի վերլուծութիւն :

5. Ո՞րն է գրաւոր վերլուծութիւնը :

— Երբ սահադասութիւն մը գրով կը վերլուծուի կ'ըսուի գրաւոր վերլուծութիւն :

Օրինակ. — Բերանացի վերլուծութիւն. — Աղաւնիկ կը թռչի :



Այս նախադասութեան մէջ «աղարնի» այն մասն է որուն վրայ բան մը ըսուած է, ուստի այս է եւնթական . «կը թոյի» այն մասն է որ կը ցուցնէ թէ ի՞նչ ըսուած է «աղարնի» ենթակային վրայ, ուստի այս է ստորոգելի :

Օրինակ . — Գրուած էր թիւն . — Աղարնի կը թոյի :

**Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ե .**

Ա . Հետեւեալները վերլուծէ գրաւոր եւ ապա ըսէ բերանացի :

- 1 . Խնձորը կարմրեցաւ : — 2 . Հաւը ածեց : — 3 . Աղբիւրը շինուեցաւ : — 4 . Աստուած կը ստեղծէ : — 5 . Տղան կը կարգայ : — 6 . Քոյրս լացաւ :

Բ . Հետեւեալ ենթականերուն վրայ ստորոգելիներ աւելցնելով նախադասութիւններ շինէ :

- 1 . Հացագործը . . . : — 2 . Վարժապետը . . . : — 3 . Պարտէզը . . . : — 4 . Շոգեմաւր . . . : — 5 . Ծաղիկը . . . :

Գ . Հետեւեալ ստորոգելիներուն քով յարմար ենթականեր դիր :

- 1 . . . . կը լողան : — 2 . . . . կը թռչին : — 3 . . . . կը խաղան : — 4 . . . . կերաւ : — 5 . . . . հագուեցաւ :

Դ . Ընթերցարանիդ յաջորդ դասին մէջ գտիր չորս ենթակայ եւ ստորոգելիները :



## ԳԱՍ Թ.

### ԲԱՌԵՐՈՒ ԴԱՍԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

ԿԱՄ

### ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Ի՞նչ է բառ : . . .

Գիտելիք. — Դիւրութեան համար լեզուին հազարաւոր բառերը կրնանք բաժնել քանի մը կարգերու իրենց տեսակին համեմատ . զորօրինակ . անպ, թուղթ, գրիչ, օր, գիրք, խելիք, կեանք, և այլն . և անոնց առանձին անուններ տալ :

2. Ի՞նչ կը ցուցնեն յիշեալ բառերը :  
— Իրեր :

Գիտողութիւն. — Ուրեմն բոլոր իր ցուցնող բառերը մէկ կարգի տակ դնելով կրնանք ընդհանուր անուն մը տալ . զորօրինակ՝ անոռն :

3. Կրնա՞ն ուրիշ կարգ մը բառեր ըսել, որոնք իր չեն ցուցներ . զորօրինակ . կը խաղաւ, կ'ուսեմ, կը գրեմ, և այլն : . . .

4. Ի՞նչ է այս կարգի բառերուն պաշտօնը :  
— Այս տեսակ բառերը բան մը կ'ըսեն ենթակայի մը վրայ :



**Գիտողութիւն.** — Ուրեմն բոլոր այն բառերը որոնք բան մը կ'ըսեն ենթակային վրայ, կրնանք նոյնպէս ուրիշ մասնաւոր անունով մը կոչել. զոր օրինակ՝ ըսայ <sup>(1)</sup> :

---

**Հ Ր Ս. Հ Ս. Ն Գ. Զ .**

**Ա.** Հետեւեալ նախադասութիւններուն մէջ ի՞նչ տեսակ բառ է ենթական եւ ի՞նչ տեսակ՝ ստորոգելին :

**Օրինակ.** — « Արեւը » իր ցուցնող բառ է. « եղաւ » բան մը ըսող բառ է :

1. Արեւը եղաւ : — 2. Հայրս եկաւ : — 3. Տերերը թրչեցաւ : — 4. Կէսօր եղաւ : — 5. Անմեղութիւնը կը սիրուի :

**Բ.** Գրէ 10 բառեր, որոնց կէսը անուն ըլլան եւ կէսը ըսայ :

---

**ԴԱՍ Ժ.**

---

**ԵՆԹԱԿԱՆ ԵՒ ԻՐ ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

**Գրէ՝** 1.) Աղջիկը կը կարէ :

1. Ի՞նչ կը կոչես զայս :

— Նախադասութիւն :

---

(1) Այս դասին մէջ ծանրանալու չէ անունի կամ բայի վրայ զանոնք ծանօթացնելու համար ուսանողին, այլ հասկցնելու է թէ բառերը դիւրութեան համար քանի մը կարգերու բաժնուած են, լոկ ասիկա է դասին նպատակը :



2. Նախադասութիւն մը կազմելու համար ի՞նչ ունենալ հարկ է :

— Ա. Բան մը՝ որուն վրայ բան մը խորհուած ու ըսուած է :

Բ. Բան մը՝ որ կ'ըսուի անոր վրայ :

3. Ասկէ հետեւցնելով առ նուազն քանի՞ բառ ըլլալու է նախադասութեան մը մէջ :

— Գէթ երկու բառեր ըլլալու են — *անուն* եւ *բայ* :

4. Այս երկու բառերը նախադասութեան ո՞ր մասերը կը կազմեն :

— Ենթակայ եւ Ստորոգելի :

2.) Փոփոխ *սիրուն* աղջիկը կը կարէ :

5. Ո՞ր բառերը աւելցած են 1) նախադասութեան մէջ :

— «Փոփոխ, սիրուն», բառերը :

6. Նախադասութեան ո՞ր մասին վրայ աւելցած են :

— «Աղջիկ», ենթակային վրայ :

Տեսանք թէ (1 նախադասութեան մէջ) առանց «*փոփոխ սիրուն*», բառերուն կրնանք կազմել նախադասութիւն մը — «*Աղջիկը կը կարէ*» :

7. Արդ 2) նախադասութեան մէջ «*աղջիկը*» ջնջելով կրնա՞նք նախադասութիւն շինել :

— «*Փոփոխ սիրուն կը կարէ*» :

8. Նախադասութիւն է այս :

— Ոչ, քանզի միտք մը չի տար :



Գիտողութիւն. — Ուստի նոյն նախադասու-  
թեան առաջին մասին ամենէն էական բառն է  
“աղջիկը”, որ է ենթական: Ահա այս կերպով  
նախադասութեան մը մէջ ամենէն էական բառը  
որուն վրայ ըսուած է բան մը, ինչպէս գիտենք,  
ենթական է. իսկ այն բառերը որ ենթակային  
վրայ աւելցած են կ'ըսուին ենթակային լրացու-  
ցիչները:

9. Ի՞նչ է ենթակայի մը լրացուցիչը:

Ենթակայի մը լրացուցիչներն են այն բա-  
ռերը որ կ'աւելցուին ենթակային վրայ անոր  
իմաստը ամբողջացնելու համար:

Օրինակ. — “Փոքրիկ աշխատասէր տղաքը կը  
կարդան,”:

Այս նախադասութեան մէջ “Տղաքը” է միակ  
բառը որուն վրայ ըսուած է բան մը “կը կարդան,”  
ուստի այս է ենթական. ասոր վրայ աւելցած բա-  
ռերն են “փոքրիկ, աշխատասէր,” որոնց կ'ըսուի  
ենթակային լրացուցիչները. “կը կարդան,”  
այն բառն է որ կը ցուցնէ թէ ի՞նչ ըսուած է  
“Տղաք,” ենթակային վրայ, ուստի ստորոգելի է:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ. Տ .

Ա. Բերանացի վերլուծէ հետեւեալները վերեւ տրուած  
օրինակին պէս:



1. Չմբան ճերմակ ձիւնը հաղեցաւ : — 2. Չեր խոշոր կատուն սենեակս եկաւ : — 3. Կարմիր ու գեղեցիկ վարդերը բացուեցան : — 4. Գարնան քաղցրերգակ թռչունները կ'երգեն : — 5. Պարտէզին գեղեցիկ եւ պտղաբեր ծառերը մեծցան :

Բ. Վերի նախադասութիւնները գրաւոր վերլուծէ :  
Կանոն . — Նախադասութեան երկու մասերը նախընթաց օրինակներուն պէս գծով մը բաժնէ, ենթակային ներքեւ գիծ մը քաշէ :

Օրինակ . — Փոքրիկ աշխատասէր տղան | կը կարդայ :

Գ. Վերը տրուած օրինակներուն մէջ ենթակային լրացուցիչները վերցուր եւ պարզ նախադասութիւններու վերածէ :

## ԴԱՍ ԺԱ.

### ՍՏՈՐՈԳԵԼԻՆ ԵՒ

### ԻՐ ԼՐԱՅՈՒՑԻՉՆԵՐԸ

Գրէ հետեւեալ նախադասութիւնները .

Ա. Իմ փոքրիկ սիրուն թռչունս կ'երգէ :

1. Ո՞րն է ենթական ասոր մէջ և ո՞րն է ասորոգելին : . . .

Բ. «Իմ փոքրիկ սիրուն», ի՞նչ են :

— Ենթակային լրացուցիչները :



Գրէ դարձեալ .

2. Իմ փոքրիկ սիրուն թոշունս ամէն օր  
ֆաղմարածայն կ'երգէ :

3. Ո՞րն է ստորագելին ասոր մէջ : . . .

4. Ի՞նչ աւելցած է և որով վրայ :

— Ստորագելին վրայ աւելցած է «ամէն օր  
ֆաղմարածայն» :

Տեսանք Ա նախադասութեան մէջ, թէ ա-  
ռանց «ամէն օր ֆաղմարածայն», բառերուն կրնայ  
կազմուիլ նախադասութիւն մը . — «Իմ փոքրիկ  
սիրուն թոշունս կ'երգէ» :

5. Արդ Բ նախադասութեան մէջ ջնջելով  
«կ'երգէ», բառը կրնան նախադասութիւն շինել .  
փորձէ : . . .

Գիտողութիւն . — Ուստի նոյն նախադասութեան  
երկրորդ մասին ամենէն էական բառն է «կ'երգէ»,  
որ է ստորագելին :

Գիտելիք . — Այսպէս նախադասութիւն մը որ-  
քան շատ բառեր պարունակէ, գլխաւոր և էական  
բառերը միշտ երկու են — Ենթակայ՝ որ ընդհան-  
րապէս իրի մը անունը կ'ըլլայ և Ստորագելի (միշտ  
բայ), որոնք նախադասութեան երկու մասերը կը  
կազմեն և առանց որոց բան չի հասկցուիր :

6. Ի՞նչ կ'ըսուէին այն բառերը որոնք ենթա-



կային վրայ կ'աւելնային անոր իմաստը ամբողջացնելու համար :

— Ենթակային յրացուցիչները :

**Դիտողութիւն.** — Նոյնպէս այն բառերը եւս որ ստորոգելիին վրայ կ'աւելնան զայն ամբողջացնելու համար, կ'ըսուին ստորոգելիին յրացուցիչները :

7. Ի՞նչ է ստորոգելիի մը լրացուցիչը :

— ՍՏՈՐՈԳԵԼԻԻ մը ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԵՆ այն բառերը որ կ'աւելնան ստորոգելիին վրայ անոր իմաստը ամբողջացնելու համար :

**Օրինակ.** — Դպրոցին ժամացոյցը բարձրաձայն կը հնչէ :

«Ժամացոյցը» ենթակայ է. քանզի այն է բուն բառը, որուն վրայ ըսուած է բան մը. «Դպրոցին» ենթակային վրայ աւելցած բառն է. ուստի ենթակային յրացուցիչն է : «Կը հնչէ» ստորոգելիին է. քանզի նոյն իսկ ըսուած բանն է ենթակային վրայ. «բարձրաձայն» ստորոգելիին վերաբերող և զայն ամբողջացնող բառն է, ուստի ստորոգելիին յրացուցիչն է :

---

### Հ Ր Ա Հ Ա Ն Գ 9 .

Ա. Հետեւեալ նախադասութիւնները բերանացի վերլուծէ վերի օրինակին հետեւողութեամբ :

1. Վարժապետը բերնուց սորվեցուց թուարանու-



Թիւնը : — 2 . Արեգակը կը շողայ լեռներուն վրայ եւ հովիտներուն մէջ : — 3 . Պարտէզիս քանի մը ծառերը չորցան : — 4 . Մատաղ տունկերուն ամէն օր ջուր տուի : — 5 . Իմ փոքրիկ եղբայրս շատ կը սիրէ երկրագործութիւնը :

Բ . Վերի նախադասութիւնները գրաւոր վերլուծէ :

Օրինակ . — Վարժապետը բերնուց սորվեցուց թուարանութիւնը :

Գ . Վերի նախադասութեանց ենթակային եւ ստորագելին լրացուցիչները վերցուր եւ պարզ նախադասութիւններու փոխէ :

Դ . Նոյն վարժութիւնները ըրէ ընթերցարանի յաջորդ դասերուդ մէջ :

## ԴԱՍ ԺԲ .

### ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ԷԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ Ա Ն Ո Ւ Ն Ե Ի Բ Ա Յ

Տարահին Վրայ գրէ . — Լուսինը կը փայլի :

1. Քանի տեսակ բառ կայ ասոր մէջ :  
— Երկու տեսակ :

2. Ի՞նչ տեսակ բառ է «լուսինը» :

— Իրի մը անունն է :

Գիտելիք . — Իր ցուցնող բառերը անուն կը կոչուին .



3. Ի՞նչ է անուն .

— Իր ցուցնող բառը ԱՆՈՒՆ կ'ըսուի :

4. Յիշեալ օրինակին մէջ «Լուսին» անունը նախադասութեան ո՞ր մասն է :

— Ենթական :

Գիտելիք. — Ընդհանրապէս նախադասութեան ենթական անուն մը կ'ըլլայ :

5. Վերի օրինակին մէջ ի՞նչ տեսակ բառ է «կը փայլի» :

— Բառ մը որ բան մը կ'ըսէ ենթակային վրայ :

Գիտելիք. — Ենթակային վրայ բան մը ըսող բառը կամ ստորոգելին, քերականութեան մէջ ըսյ կը կոչուի :

6. Ի՞նչ է բայ :

— ԲԱՅԸ բառ մըն է որու միջոցովը բան մը կ'ըսենք ենթակային վրայ :

Գիտելիք. — Բայը միշտ նախադասութեան ստորոգելին է :

7. Կրնա՞ն նախադասութիւն մը կազմել առանց այս երկու տեսակ բառերուն — անուն և բայ : . . .



Գիտողութիւն. — Կը տեսնենք թէ լեզուին մէջ  
անհրաժեշտ են գէթ երկու տեսակ բառեր — ա-  
նուն և բայ, զորս կրնանք կոչել էական բառեր :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 10 .

Ա . Հետեւեալներուն մէջ որոշէ անունը եւ բայը :  
Օրինակ . — Ոչխարը կը մայի :

«Ոչխարը» որ պարզ ենթական կը ցուցնէ անուն է ,  
քանզի իր մը կը ցուցնէ :

«Կը մայի» բայ է , քանզի նախադասութեան ստորո-  
գելին է :

1 . Ոչխարը կը մայի . — 2 . Ծաղիկը կը խամրի . —  
3 . Տղան կը կարգայ . — 4 . Սոխակը կ'երգէ . — Կովը կը  
բառայէ . — 6 . Ձին կը վազէ :

Բ . Կէտերուն տեղ յարմար բայեր դիր :

Օրինակ . — Խնձորը ինկաւ :

1 . Խնձորը . . .

2 . Վարդը . . .

3 . Գառը . . .

4 . Ծովը . . .

5 . Մանուկը . . .

6 . Մըջիւնը . . .

Գ . Կէտերուն տեղ յարմար անուններ դիր :

1 . . . . կը խաղան :

2 . . . . կը սորվին :

3 . . . . կը վազեն :

4 . . . . կուլան :

5 . . . . կարգացին :

6 . . . . կը նստի :

7 . . . . կը պատօէ :

8 . . . . կը սողայ :

Դ . Շինէ հինգ նախադասութիւններ իբրեւ ենթակայ  
գործածելով անուն մը որ ըլլայ



Տեղի մը , ինչպէս	Փարիզ	} Անուանը
Կենդանիի մը »	Կով	
Մետաղի մը »	Ոսկի	
Բոյսի մը »	Ցորեն	

- Օրինակ 1. — Փարիզ գեղեցիկ քաղաք մըն է :  
» 2. — Կովը մեզի կաթ կուտայ :  
» 3. — Ոսկին շատ կը փայլի :  
» 4. — Ցորենը ալիւր կը շինուի :

ԴԱՍ ԺԳ.

ՀԱՆԴԷՍ

1. Ի՞նչ է նախադասութիւն (Դաս Ա.) :
2. Ի՞նչ է բառ (Դաս Բ.) :
3. Ի՞նչ է գիր և քանի՞ տեսակ գիր կայ (Դաս Գ.) :
4. Քանի՞ կերպով կ'արտայայտենք գաղափարնիս (Դաս Դ.) :
5. Ի՞նչ է իր : Երբ կ'ըսեմ գիրք, խնձոր, և այլն, իր են : Ուրեմն երբ կ'ըսուի « խնձորը կ'ուտեմ », խնձորին անունը կամ բաձն է որ կ'ուտուի՞ թէ այդ բառով ցուցուած իրը (Դաս Ե. 2.) :
6. Նախադասութիւն մը քանի՞ մասերէ կը բաղկանայ և այդ մասերը որո՞նք են (Դաս Ե.) :



7. Ի՞նչ է ենթակայ, ի՞նչ է ստորագելի :
8. Ո՞րն է վերլուծութիւն և քանի՞ կերպով կ'ըլլայ (Դ... Ը.) :
9. Ի՞նչ են ենթակային և ստորագելիին լրացուցիչները (Դ... Ժ. ԺԱ.) :
10. Բառերուն մէջ որո՞նք են էական կոչուածները (Դ... ԺԲ.) :
11. Ի՞նչ է անուն. ի՞նչ է բայ (Դ... ԺԲ.) :

---

## ԴԱԱ ԺԴ.

---

### ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Առնենք իր մը, զորօրինակ «աթու», և նկարագրենք զայն հետեւեալ հարցումներուն պատասխանելով. —

1. Ի՞նչ է :
2. Ի՞նչ բանի կը գործածուի :
3. Ինչով կը շինուի :

Օրինակ. — 1. Աթուը կարասի մըն է :  
2. Կը գործածուի նստելու համար :  
3. Ընդհանրապէս փայտէ կը շինուի :



Սոյն երեք նախադասութիւնները կրնանք միացնել այսպէս .

Աթոռը կարասի մըն է որ կը գործածուի նստելու համար և ընդհանրապէս փայտէ կը շինուի :

---

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 1 1 .

Ա . Նախընթաց օրինակին պէս նախադասութիւններ շինէ նոյն հարցումները ընելով եւ հետեւեալ ենթակայներով .

1. Դանակ : — 2. Ասեղ : — 3. Գրասեղան :

Բ . Վերլուծէ նախադասութիւններդ գրաւոր եւ բանաւոր (բերանացի) :

---

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 1 2 .

Ա . Գրէ տասը իր ցուցնող բառեր :

Բ . Գտիր տասը ուրիշ տեսակ բառեր որ բան մը կ'ըսեն ենթակայի մը վրայ :

Գ . Գտիր տասը բառեր որոնք ոչ իրի մը անուն են եւ ոչ բան մը կ'ըսեն իրին վրայ . այսինքն ոչ անուն են եւ ոչ բայ :

Օրինակ . — Լեզի , թեթեւ , վրայ , մէջ , կամաց , քանզի , եւայլն :

Դ . Աշակերտները վարը դրուած բառերուն մէջ նոյն տեսակէ եղողները հետեւեալ օրինակին պէս կարգաւ շարեն (1) :

---

(1) Այս մասը դրուած է միայն աղօս գաղափար մը տալու համար ուսանողին՝ նկատմամբ բառերու զանազանութեան , որուն վրայ ծանրանալու հարկ չի կայ .



Օրինակ . — Սաստիկ , ուրեմն , գեղեցիկ , մեծ ,  
 ուստի , հարուստ , ծեր , ժիր , յանկարծ , ո՛հ , բայց , այլ ,  
 ա՛խ , ես , քովը , ինք , վրայ , ետեւէն , ծառ , տուն , մարդ :

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է
Ուրեմն	Գեղեցիկ	Սաստիկ	Ո՛հ	Ես	Քովը	Ծառ.
Ուստի	Ծեր	Յանկարծ	Ա՛խ	Ինք	Վրայ	Տուն
Բայց	Հարուստ				Ետեւէն	Մարդ
Այլ	Ժիր					
	Մեծ					

Սուրբ , ինչու որ , համար , երէկ , աւա՛ղ , աղքատ ,  
 առտուն , սաստիկ , անիկա , մէջ տեղը , սակայն , ծանր ,  
 մենք , այո , ոչ , ինչո՞ւ , ուր , գէշ , քանզի , կանուխ ,  
 հոն , հոս , ուշ , դուն , այսօր , շուրջը , ներսը , միշտ ,  
 ամէն օր , ո՛հ , ա՛հ , բարի , տգէտ , ծոյլ , գարշելի ,  
 վաղը , օ՛հ , վա՛յ , երբ , վասն որոյ , վասն զի , թուղթ ,  
 սեղան , աթոռ , քար :

Հ Ր Ա . Հ Ա . Ն Գ . 13 .

Ա . Հսէ իրի մը անուն :

— Ասեղ :

Նկարագրէ զայն սա հարցումներուն պատասխանելով :

1. Ի՞նչ է :

2. Ի՞նչ բանի կը գործածուի :

3. Ինչէ՞ն կը շինուի :

Օրինակ . — 1. Ասեղը գործիք մըն է :

2. Կը գործածուի կարելու համար :

3. Կը շինուի մետաղէ :



Յիշեալ երեք նախադասութիւնները միացուր :

Օրինակ . — Ասեղը գործիք մըն է , որ կը գործածուի կարելու համար եւ կը շինուի մետաղէ :

Նոյն օրինակին պէս նկարագրէ հետեւեալները : 1. Գրիչ : — 2. Հայ : — 3. Վերարկու :

Բ. Հետեւեալ նախադասութիւնները իրարմէ բաժնելով առանձին նախադասութիւններ կազմէ :

Օրինակ . — Հրեշտակը հոգի մըն է , որ Աստուծմէ կը զրկուի եւ մարդոց կը խօսի :

1. Հրեշտակը հոգի մըն է .

2. Աստուծմէ կը զրկուի .

3. Եւ մարդոց կը խօսի :

1. Վարժապետը՝ որ բարի մարդ մըն է , մեր ուսուցիչն է եւ շատ կ'աշխատի :

2. Ծառը տունկ մըն է որ պարտէզին մէջ կ'աճի եւ պտուղ կուտայ մեզի :

Բ. Հետեւեալ նախադասութիւններուն բոլոր լրացուցիչները վերցուր եւ միայն երկու բառերէ — ենթակայէ եւ ստորոգելիէ — բաղկացեալ պարզ նախադասութեան փոխէ :

Օրինակ . — Այս երկու եղբայրները հեզուքեամբ եւ հշուքեամբ իրենց դասերը սերտելու կ'աշխատին :

Եղբայրները կ'աշխատին :

1. Սա երկու առաջատար նաւերը սաստկաշունչ հովէ մը մղուելով կ'երթան :

2. Իմ տանս բոլոր պատերը անձրեւէն եւ հովէն զարնուելով մեծապէս մնասուեցան :

3. Այս մեծ դպրոցին բոլոր աշակերտները ուսմամբ եւ գիտութեամբ զարգացան :





# ԴԱՍ ԺԵ.

## ԴԵՐԱՆՈՒՆ

1. Նախադասութիւն մը քանի մասերու կը բաժնուի և այն մասերը ի՞նչ կը կոչուին : . . .

2. Իւրաքանչիւր մաս առ նուազն քանի բառ կը պարունակէ, և ինչո՞ւ համար. որո՞նք են այդ բառերը : . . .

3. Ենթական ի՞նչ տեսակ բառ կ'ըլլայ սովորաբար :

— Անուն :

Գրէ .

Ա. Շուները օգտակար կենդանիներ են .

Բ. Քանգի անոնք տուները կը պահեն :

4. Ա. նախադասութեան մէջ ո՞րն է ենթական :

5. Բ. նախադասութեան մէջ ո՞րն է ենթական :

Որո՞նք կը պահեն տուները :

— «Անոնք» կը պահեն, որ է ենթական :

6. «Անոնք» անուն է. որո՞նց համար ըսուած է : . . .

7. «Անոնք» բառին տեղ դի՛ր շուները և կարդա Ա. և Բ. նախադասութիւնները :

Գրէ դարձեալ .

Ա. Յակոբ հիշանդ է, Յակոբ գաւազանով կը պսրսի :



Բ. Մանուկները անվեղ եւն , թէեւ մանուկները շատ կուշան :

8. Ի՞նչ բառեր կրնան դրուիլ «Յակոբ»ի և «մանուկներ»ուն տեղ : . . .

9. Ի՞նչ տեսակ բառեր են «Յակոբ» «մանուկներ» : . . .

Գիտելիք . — Արդ՝ որովհետեւ յիշեալ անուններուն տեղ դրուեցան անիկա , անոնի բառերը , ուրեմն այս կարգի բառեր անունի տեղ դրուող եւն :

Անունի տեղ դրուող բառերը փրակաւորութեան վեց ԴԵՐԱՆՈՒՆ կը կոչուին :

10. Ի՞նչ է Դերանուն :

— ԴԵՐԱՆՈՒՆ կ'ըսուին անունի տեղ դրուող բառերը :

11. Ո՛ր և է անձ կրնայ ըսել իրեն համար ես , ո՛ր և է անձի անունն տեղ կրնայք ըսել դուն , ո՛ր և իցէ անձի կամ բանի համար կրնայք ըսել անիկա կամ այն ևայլն : . . .

Գիտողութիւն . — Ուրեմն միայն քանի մը Դերանուններ կրնան գործածուիլ հազարաւոր իր ցուցնող բառերու — անուններու — տեղ , և յիրաւի դերանուն ըսուած բառերը քանի մը հատ են միայն , մինչդեռ անունները և բայերը չենք կրնար համրել :

Գլխաւոր դերանուններն են — ես , ևնի , դուն , դու , այն , ինի , անոնի , իրեւնի :



Հ Ր Ա Հ Ա Ն Գ 14.

Ա. Նշանակէ դերանունները եւ ըսէ թէ ո՞ր անունի տեղ դրուած են :

1. Ես դասս կը սիրեմ : — Մենք կը պատուենք ծերերը : — 3. Անոնք տեսան զիս , երբ ես տղոց հետ էի : — 4. Դասատուն պատժեց քոյրս , քանզի անիկա յանցանք գործեց . — 5. Դասընկերս բարի տղայ մըն է , դասս սերտելու համար ինք միշտ կ'օգնէ ինծի : — 6. Սպասուհիս արձակեցի , քանզի անիկա շատ ծոյլ էր :

Բ. Դիր յարմար դերանուններ այն անուններուն տեղ որոնք կրկնուած են :

1. Եթէ տղան բարի է , տղան կը սիրուի : — 2. Աստուած ամենակարող է , Աստուած մեղաւորին կը ներէ : — 3. Հայրս այսօր տուն եկաւ , հայրս տկարացած տեսայ , քանզի հայրս սանդուխէն ինկած էր : — 4. Ազամ եւ Եւա դրախտէն արտաքսուեցան , քանզի՝ Ազամ եւ Եւա արգիլեալ պտուղէն կերան : — 5. Ընկերներս դպրոցին առջեւ ինծի շապասեցին , բայց ես ընկերներուս չի նեղացայ : — 6. Ես քրոջս ներեցի , բայց մայրս քոյրս պատժեց : — 7. Եղբայրս հիւանդ է , ուստի եղբօրս տեղ խանութ կ'երթամ :

Գ. Հետեւեալներուն մէջ կէտերուն տեղ յարմար դերանուններ դիր :

1. Եղբայրս Օրթա-գիւղէն եկաւ , . . . տեսա՞ր : 2. — Դասընկերդ հիւանդ է , . . . այցելութիւն տալու ես : — 3. Թովմաս ու քոյրը կորսնցուցին . . . խաղալիքը , ուստի . . . չեն կրնար խաղալ : — 4. . . . կարգացին . . . աղօթեցինք : — 5. . . . հայրդ կը սիրես , . . . քեզ կը սիրէ : — 6. Պզտիկ քոյրս կը հնազանդի , . . . կը յարգեմ . . . :





## ԳԱՍ ԺԶ.

### ԵՆԹԱԿԱՅ, ՍՏՈՐՈԳԵԼԻ ԵՒ ԼՐԱՑՈՒՑԻԶՆԵՐԸ

Գրէ՛ Կասռուն Եղբօրս ոճֆը խաժար :

1. Ո՞րն է Ենթական ստոր մէջ, Ի՞նչ տեսակ բառ է : . . .

2. Ո՞րն է ստորոգելին. Ի՞նչ տեսակ բառ է . ուրիշ տեսակ բառ մը ստորոգելի կ'ըլլայ : . . .

3. Ո՞րոնք են ստորոգելին լրացուցիչները :  
— «Եղբօրս ոճֆը», քանզի անոնի՝ «խաժար» ստորոգելիին վրայ աւելցած են անոր իմաստը ամբողջացնելու համար :

4. Ի՞նչ տեսակ բառեր են ասոնք :

— ԱՆՈՒՆ :

Գիտողութիւն. — Ուրեմն անունները միշտ ենթակայ չեն, կրնան լրացուցիչներ ըլլալ ստորոգելիի :

Գրէ՛ Եղբօրս կասռուն ոճֆս խաժար :

5. Ո՞րն է Ենթական, ո՞րն է լրացուցիչը : Ի՞նչ տեսակ բառ է նոյն լրացուցիչը :

— ԱՆՈՒՆ :

Գիտելիք. — Ուրեմն անունները կրնան ըլլալ նաեւ ենթակայի լրացուցիչներ :



Գրէ՛ Սնիկա հիշանդացաւ :

6. Ասոր մէջ ի՞նչ տեսակ բառ է ենթա-  
կան : . . .

«Անոր խորը հիշանդացաւ» :

7. Ո՞րն է ենթակային լրացուցիչը . ի՞նչ տե-  
սակ բառ է այն :

— Դերանուն :

Դիտողութիւն. — Ուրեմն դերանունները միշտ  
ենթակայ չեն այլ կրնան ըլլալ նաեւ ենթակայի  
լրացուցիչ :

Գրէ՛ Վարժապետը եկաւ , զսնիկա տեսնի :

8. Ասոր մէջ ո՞րն է ստորոգելին լրացուցիչը  
և ի՞նչ տեսակ բառ է : . . .

Դիտողութիւն. — Ուրեմն դերանունները կրնան  
ըլլալ նաեւ ստորոգելի լրացուցիչ :

---

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 15 .

Ընթերցարանի դասիդ մէջ գտիր ենթակայի եւ  
ստորոգելի լրացուցիչներ եւ ըսէ թէ ի՞նչ տեսակ բա-  
ռեր են անոնք :

---



## ԳԱՍ ԺԷ.

### ԲԱՌԱԶՆՆՈՒԹԻՒՆ

1. Հետեւեալ նախադասութիւններուն մէջ ո՞ր բառը անուն է, ո՞րը դերանուն և ո՞րը բայ : —  
«Արրահամ նահապէս հաւասաց եւ այն արդարութիւն սեպուռեցաւ» : . . .

Գիտելիք. — Երբ այսպէս կ'որոշենք բառերը և կ'ըսենք թէ ի՞նչ տեսակ բառեր են, զորօրինակ երբ նախադասութեան մէջ կը գտնենք իր ցուցնող բառ մը, և կ'անուանենք զայն Անուն, կը գտնենք անուան տեղ դրուած բառ մը և կ'անուանենք զայն Դերանուն և այլն, այս գործողութեան ըստագնանութիւն կ'ըսենք :

2. Ի՞նչ է բառազննութիւն,  
— ԲԱՌԱԶՆՆՈՒԹԻՒՆԸ է այն գործողութիւնը որով նախադասութեան մէջ բառերուն տեսակները կ'որոշենք :

Բառազննութիւնը կրնայ կատարուիլ թէ՛ բերանացի և թէ՛ գրաւոր :

Օրինակ. — Բերանացի Բառազննութիւն :

Աղաւնիկ կը սիրէ ծաղիկները, ուսի կը մշակէ զանոնք :



«Աղաւնի», անձի մը անուն է, ուստի անուն  
է :

«Կը սիրէ», բան մը կ'ըսէ Աղաւնիին վրայ,  
ուստի բայ է :

«Ծաղիկները», իր կը ցուցնէ, ուստի անուն  
է . և այլն :

Օրինակ . — Գրաստի Բառազննութիւն :

Անուն	Դերանուն	Բայ
1. Աղաւնի 2. Ծաղիկները	1. Զանոնք	2. Կը սիրէ 2. Կը մտակէ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 16 .

Հետեւեալ նախադասութիւններուն բառազննութիւնը  
կատարէ բերանացի եւ գրաւոր, վերի օրինակներուն  
պէս :

1. Ես դաշտին մէջ այծի երամակ մը տեսայ :
2. Յովսէփ գեղեցիկ ճանչցաւ իր եղբայրները, այլ  
անոնք չի ճանչցան զինք :
3. Իմ կարգս մրցանակ առաւ :
4. Անոնք կաթ ունին, կը խմեն զայն :
5. Դուք եղբայրս տեսա՞ք, անիկա զիւղ գնաց :





## ԴԱՍ ԺԸ.

### ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Օրինակէ հետեւեալ հարցումները և իւրաքանչիւրին ներքեւ գրէ պատասխանը, այնպէս որ նախադասութիւնը կատարեալ ըլլայ :

Օրինակ. Հարցում. — Մարդկութեան նախահայրը ո՞վ էր :

Պատասխան. — Մարդկութեան նախահայրն էր Ադամ :

1. Ո՞վ էր Օսմանեան պետութեան հիմնադիրը : . . .

2. Թուրքիոյ մայրաքաղաքը որն է : . . .

3. Մենք քանի՞ զգայարանք ունինք : . . .

4. Ո՞վ գտաւ Ամերիկան : . . .

5. Մեր երկրագնտին ձեւը ի՞նչ է : . . .





## ԴԱՍ ԺԹ.

ՊԱՐԶ ԵՒ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ՍՏՈՐՈԳԼԻ

1. Նախադասութիւն մը քանի մասերու կը բաժնուի, և ի՞նչ են անոնք: . . .

2. Ո՞րն է ենթական և ստորոգելին հետեւեալին մէջ: . . .

Գարնան օդը փոփոխական կ'ըլլայ:

3. Ի՞նչ են «գարնան» և «փոփոխական» բառերը:

— Ենթակային եւ ստորոգելիին յրացուցիչները:

1. Ուրեմն ինչո՞ւ երեք մասի չի բաժնուիր նախադասութիւնը, լրացուցիչը անոր մէկ մասը չէ: . . .

Քանզի լրացուցիչները միայն ենթական եւ ստորոգելին կ'ընդլայնեն:

Գիտելի՞ք. — Երբ ենթական կամ ստորոգելին իրենց լրացուցիչներով ընդլայնուած են, բաղադրեալ ենթակայ կամ ստորոգելի կը կոչուին, իսկ առաջին պարագային մէջ պարզ ենթակայ կամ ստորոգելի կը կոչուին:

5. Ի՞նչ է պարզ ենթակայ կամ ստորոգելի:

— Երբ ենթական կամ ստորոգելին լրացու-



ցիչ չունին կ'ըսուին ՊԱՐԶ ԵՆԹԱԿԱյ կամ ՊԱՐԶ  
 ստորագելի :

ՕՐԻՆԱԿ . — Ծառը կ'անի :

6. Ի՞նչ է բաղադրեալ ենթակայ կամ ստորոգելի :

— Երբ ենթական կամ ստորագելին լրացուցիչ ունին կ'ըսուին ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱյ կամ ԲԱՂԱԴՐԵԱԼ ստորագելի :

ՕՐԻՆԱԿ . — Կանաչ ծառը միտս կ'անի :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 1 7 .

Ա. Հետեւեալներուն մէջ պարզ եւ բաղադրեալ ենթակաները եւ ստորագելիները որոշէ :

1. Ձին վազեց : — 2. Այս սեւ զօրեղ ձին վազեց :
- 3. Այս սեւ զօրեղ ձին յանկարծ գիւղին մէջ վազեց :
- 4. Տասը ձիեր միասին վազեցին : — 5. Բոլոր պարտէզին բոյսերը օդին տաքութենէն չորցան :

Բ. Վերի օրինակները գրաւոր ձեւով եւս ներկայացուր :

Օ Ր Ի Ն Ա Կ

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ	
Լրացուցիչ Ենթ.	Պարզ Ենթ.	Լրացուցիչ Ստ.	Պարզ Ստ.
Իմ գեղեցիկ	սուս	Անձրեւէն մեծապէս	վնասուեցաւ

Գ. Ընթերցարանի յաջորդ դասիդ մէջ նոյն վարժութիւնները ընես :





## ԴԱՍ Ի.

### ՅԱՏԿՈՒԹԻՒՆ ՑՈՒՑՆՈՂ ԲԱՌԵՐ

1. Որո՞նք են խօսք մը կազմող տարրերը :  
— Բառերը :

2. Քանի տեսակ բառեր սորվեցանք մինչեւ հիմա և ի՞նչ կը կոչուին անոնք : . . .

Գիտելիք. — Անունը (կամ դերանունը) և բայը հական բառեր են :

3. Խորհուրդ մը լիովին յայտնելու համար բաւական են յիշեալ երեք տեսակ բառերը :  
— Ոչ :

Գիտողութիւն. — Խօսքի մը շէնքը շինելու համար բաւական չեն մէկ երկու տեսակ նիւթեր — անուն, դերանուն, բայ — հարկ են այլ տարրեր եւս :

Աշակերտները բան մը ըսեն Վարդի Վրայ :

Օրինակ. — Վարդը կը բուսէ :

4. Ո՞ր վարդը կը հասկնաս երբ կ'ըսուի «վարդը կը բուսէ» :

— Ամէն իր ուր վարդ անունը ունի :

5. Արդ եթէ կ'ուզեմ ըսել թէ ինչ յատկու-



Թիւն ունի այդ վարդը որ կը բուրէ . ինչ տեսակ  
բառ աւելցնելու եմ :

— Յասկութիւն ցուցնող բառեր :

6. Կրնաս անուն մը կամ դերանուն մը ա-  
ւելցնել :

— Ոչ, քանզի անունը կը ցուցնէ իրը ոչ թէ  
իրի՛ն յասկութիւնը :

7. Ուրեմն կրնաս գտնել ուրիշ տեսակ բառ  
մը որ այդ իրին — վարդին — մէկ յատկութիւնը  
ցուցնէ : . . .

8. Ո՞ր վարդը կը հասկնաս երբ կ'ըսուի

Կարմիր վարդը կը բուրէ :

— Այն կարգի վարդերը որ կարմիր յաս-  
կութիւնը ունին :

9. Յիշէ իր մը , զորօրինակ ջուրը . քանի՞  
յատկութիւններ կրնաս համարել զորս ունի ջուրը :

— Տափ , պաղ , սառած , աղի , լեղի , ա-  
նուշ , եւայլն :

---

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 18 .

Ա . Հետեւեալ իրերուն յատկութիւնները գտիր եւ  
իւրաքանչիւրին տակ կարգաւ գրէ .

Ոսկի , արծաթ , ածուխ , ծառ , մարդ :

Բ . Հետեւեալ բառերուն ո՞րը իր կը ցուցնէ եւ ո՞րը  
յատկութիւն :



Բարի, անուշ, մութ, թուղթ, շէնք, մեծ, ձեռք,  
աթոռ, աղւոր, համեղ, գրասեղան, գեղեցիկ, մարդ,  
լեզի, խորունկ, նոր, երկաթ, քաղցր, թեթեւ, տախ-  
տակ, քար, ծանր, փայտ, դպրոց, պաղ, կլոր, տերեւ,  
ասեղ, տուն, հաստ :



### ԴԱՍ ԻԱ.



## ԵՆԹԱԿԱՅԻ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԼԻ ԼՐԱՑՈՒՑԻԶ

### Ա Ծ Ա Կ Ա Ն

Աշակերտները գրեն . —

Պայծառ արեւը կը շողայ .

1. Ո՞րն է ենթական ասոր մէջ և ինչպիսի  
ենթակայ է : . . .

2. Ո՞րն է իր քաղցրիչը : . . .

3. «Պայծառ» բառը ինչ կը ցուցնէ :

— «Արեւ»ին մէկ յատկութիւնը կը ցուցնէ :

Գրեցէ՛ք յարձեւ . —

Երկինքը պայծառ շուաւորներով կը շողայ :

4. Ո՞րն է ասորոգելին և ինչպիսի . . .

6. Ո՞ր քաղցրիչներով ընդլայնուած է ասո-  
րոգելին : . . .

6. Հոս որո՞ւ յատկութիւնը կը ցուցնէ «պայ-  
ծառ» . . .



7. Ուրեմն յատկութիւն ցուցնող բառերը ի՞նչ պաշտօն կը կատարեն նախադասութեան մէջ :

— Ենթական եւ ստորագելին կ'ընդլայնեն իբր լրացուցիչներ :

Գիտելիք. — Յատկութիւն ցուցնող բառերը քերականութեան մէջ կը կոչուին Ածական :

8. Ի՞նչ է ածական :

— Յատկութիւն ցուցնող բառերը ԱԾԱԿԱՆ կը կոչուին :

---

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 19 .

Ա. Հետեւեալներուն մէջ նշանակէ բոլոր այն բառերը որ ածական են եւ ըսէ թէ ո՞ր իրի յատկանիշն են :

Օրինակ. — Սիրուն փոքրիկ աղջիկ մը ինծի նմակ մը գրեց :

«Սիրուն փոքրիկ» ածական են քանզի աղջկան յատկութիւնը ցուցնող բառերն են :

1. Զով զեփեւոր կը փչէ : — 2. Բարակ թուղթը շուտ կը պատռի : — 3. Երկու բարձրահասակ մարդիկ ինծի պատահեցան : — 4. Պզտիկ տղայք եթէ աշխատին կարգալ կը սորվին : — 5. Բարի աղջիկները իրենց մայրերուն կ'օգնեն : — 6. Հասուն պտուղը անուշ կ'ըլլայ : — 7. խամրած ծաղիկները կը թափին :

Բ. Հետեւեալ անուններուն վրայ յարմար ածականներ դիր եւ ենթական ընդլայնէ կամ բազադրեալի փոխէ :

1. . . . աշակերտը կը գովուի : — 2. . . . տղայք



դաս կը սերտենն : — 3. . . . ծառը շուք կուտայ : 4. . . .  
 տուները քարով կամ տախտակով կը շինուին : — 5. . . .  
 մարդիկ զԱստուած կը պաշտենն . — 6. . . . մեղուն մեղր  
 կը ժողվէ : — 7. . . . շունը կը սիրէ իր տէրը :

Գ. Սա ածականներուն առջեւ անուններ դիր :

1. Տգէտ . . . : — 2. Զուարթ . . . : — 3. անուշ  
 . . . : — 4. Սուտ . . . : — 5. Խորունկ . . . : — 6.  
 Սուրբ . . . : — 7. Դժուար . . . : — 8. Լաւ . . . :  
 — 9. Փեղեցիկ . . . : — 10. Կարմիր . . . :

**Հ Ր Ա Հ Ա Ն Գ 20.**

Ա. Հետագայ նախադասութիւնները վերլուծէ բերա-  
 նացի եւ գրաւոր :

Օրինակ . — Բէրանացի վերլուծութիւն :

Դժուար դասերը կը յոգնեցնեն աշակերտը :


«Դժուար դասերը» բաղադրեալ ենթակայ է :

«Դասերը» պարզ ենթակայ է, որ ընդլայնուած է  
 «դժուար» ածականով մը :

«Կը յոգնեցնեն աշակերտը» է բաղադրեալ ստորո-  
 գելի :

«Կը յոգնեցնեն» է պարզ ստորոգելի, որ ընդլայ-  
 նուած է «աշակերտը» անունով :

1. Դժուար դասերը կը յոգնեցնեն աշակերտը : — 2.  
 Սա գիւղը մեծ խանութ մը շունի : — 3. Հիւանդ մարդը  
 փափուկ անկողնոյ մէջ պառկելու է : — 3. Հաւատարիմ  
 եւ գործունեայ սպասուհին միշտ կը գնահատուի իր տան  
 տիկինէն : — 5. Զօրեղ ջորին ծանր բեռ կրնայ կրել :





Բ. Տրուած նախադասութիւնները գրաւոր վերլուծէ :  
Օրինակ . — Գրաւոր վերլուծութիւն :

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		ԲԱՂԱԴՐԵԱԼ ՄՏՈՐՈԳԵԼԻ	
Լրացուցիչ ենթ.	Պարզ ենթ.	Պարզ Մտ.	Լրացուցիչ Մտ.
Դժուար	գործերը	կր յոգնեցնեն	աւակերտը

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 21 .

Ա. Հետագայ նախադասութիւններուն բերանացի բառազննութիւնը կատարէ :

Օրինակ . — Ծոյլ եւ անառակ տղան չի յաջողիր դաստեղծել մեզ , անիկա զինքը եւ ծնողքը աղփատ մարդ կ'ընէ :

«Ծոյլ եւ անառակ» արտահայտութիւնն , քանզի տղան յատկութիւնը կը ցուցնեն ,

«Տղան» իր ցուցնող բառ է , ուստի անուն է :

«Զի յաջողիր» բան մը կ'ըսէ տղան վրայ , ուստի բայ է :

«Մէջ» ծանօթ բառ չէ ինքի :

«Անիկա» տղան անունին տեղ դրուած ըլլալով դերանուն է , եւայլն :

Աւտուած երկինքը ու երկիրը ստեղծեց մեծ իմաստութեամբ եւ անսահման կարողութեամբ , եւ անիկա այս գարնանաշի գործը կատարեց միայն խօսքով :

Ա. Վերի խօսքին գրաւոր բառազննութիւնը ըրէ :



Օրինակ. — Գրաւոր քառազննութիւն :

«Ծոյլ եւ անսուակ տղան չի յաջողիր դասերուն  
մէջ, անիկա թէ զինքն եւ թէ ծնողքն աղֆաս մարդ կ'ընէ :

ԱՆՈՒՆ	ԴԵՐԱՆՈՒՆ	ԲԱՅ	ԱԾԱԿԱՆ	ԱՆԾԱՆՕԹ ԲԱՌԵՐ
1. Տղայ 2. Գասերուն 3. Ծնողք 4. Մարդ	1. Անիկա 2. Զինքն	1. Զի յաջողիր 2. Կ'ընէ	1. Ծոյլ 2. Անսուակ 3. Աղֆաս	1. Մէջ 2. Եւ 3. Թէ



## ԴԱՍ ԻՔ.

### ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Հետեւեալ հարցումներուն պատասխանելով  
չինէ նախադասութիւններ և ապա վերածէ զա-  
նոնք երկու նախադասութեանց որ իրարու միա-  
ցած են :

1. Ի՞նչ է :

2. Ո՞ւր է :

3. Ինչո՞վ անուանի է :



Օրինակ . — Բարիզ

1. Բարիզ մեծ քաղաք մըն է .

2. Ֆրանսայի մէջ է .

3. Անուանի է իր գեղեցկութեամբ :

Բարիզ որ մեծ քաղաք մըն է Ֆրանսայի մէջ ,  
անուանի է իր գեղեցկութեամբ :

1. Կ . Պոլիս : — 2. Բնակած գիւղդ : — 3.  
Նեղոս :

---

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 14 .

1. Գրէ մէկ նախադասութիւն միայն երկու բառերով ,  
որոնց մէկը անունն ըլլայ միւսը քայ :

2. Գրէ մէկ նախադասութիւն երեք բառերով , որոնց  
մէկը ըլլայ անունն , մէկը ածականն եւ միւսը քայ :

3. Գրէ երկու նախադասութիւններ իրարու կա-  
պակցուած , որոնց մէջ գտնուին անունն , դերանունն ,  
քայ , ածականն :

---

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 15 .

Պարզ ենթակայով մը եւ պարզ ստորոգելիով մը  
չինէ փոքր նախադասութիւն մը , եւ ապա հետզհետէ  
լրացուցիչներ աւելցնելով մեծցուր նախադասութիւնը՝  
ընդլայնելով ենթականն եւ ստորոգելին որչափ որ կրնաս :



### ՕՐԻՆԱԿ

#### ԵՆԹԱԿԱՅ

#### ՍՏՈՐՈԳԵԼԻ

- |  |  |
|--|--|
| 1. . . . . Տղան                                    | կը մեծնայ :  |
| 2. . . . . Այս տղան                                | արագ կը մեծնայ :   |
| 3. . . . . Այս փոքր տղան                           | արագ կը մեծնայ դպրոցին մէջ :   |
| 4. Մեր եղբոր այս փոքր տղան                         | արագ կը մեծնայ օդաւէտ դպրոցին մէջ :                                  |
| 5. Մեր եղբոր այս փոքր բայց<br>որք տղան             | արագ կը մեծնայ սա դիմացի<br>օդաւէտ դպրոցին մէջ :                     |
| 6. Մեր եղբոր այս փոքր բայց<br>հօրմէ վօրմէ որք տղան | գարմանաշի կերպով արագ կը<br>մեծնայ սա դիմացի օդաւէտ<br>դպրոցին մէջ : |

Աշակերտք

կը սովորի (1) :

### ԴԱՍ ԻԳ.

### ՀԱՆԴԷՍ

1. Սովորաբար ի՞նչ տեսակ բառ ենթակայ կ'ըլլայ : . . .
2. Ուրիշ ո՞ր տեսակ բառ ենթակայ կրնայ ըլլալ :
3. Ի՞նչ է դերանուն : . . .

(1) Վերի օրինակին պէս մեծցուր նախադասութիւնը :



4. Անուանները թէ դերանուանները շատ են .  
յիշէ քանի մը դերանուաններ : . . .

5. Անուանները միշտ ենթակայ են . ուրիշ ի՞նչ  
կրնան ըլլալ . օրինակ տուր : . . .

6. Դերանուանները կրնան լրացուցիչ ըլլալ .  
օրինակ : . . . (Տէ՛ս Դ՝՝՝ ԺԴ.) :

7. Ի՞նչ է բառազննութիւն . քանի՞ կերպով  
կ'ըլլայ : . . .

8. Լրացուցիչները նախադասութեան մէկ մա-  
սը կը կազմեն . հապա ի՞նչ բանի կը ծառայեն .  
(Դ՝՝՝ ԺԸ.) :

9. Ի՞նչ է պարզ ենթակայ , պարզ ստորո-  
գելի : . . .

10. Ի՞նչ է բաղադրեալ ենթակայ , բաղա-  
դրեալ ստորոգելի . (Դ՝՝՝ ԺԸ.) :

11. Այսպիսի նախադասութիւն մը , այսինքն  
լրացուցիչներ պարունակող ենթակայի և ստորո-  
գելի մէկ գրաւոր ձեւը շինէ . (Տէ՛ս Հրահանգ 17) :

12. Էական բառերը որո՞նք են . (Դ՝՝՝ ԺԹ.) :

13. Իրին յատկութիւնը ցուցնող բառը ի՞նչ  
կը կոչուի : . . .

14. Ածականները ի՞նչ բանի կը ծառայեն նա-  
խադասութեան մէջ . (Դ՝՝՝ Ի ) :





# ԴԱՍ ԻԴ.

## ՍՏՈՐՈԳԵԼԻԻ ԼՐԱՑՈՒՑԻԶ. — ՄԱԿԲԱՅ

Աշակերտները գրեն .

«Մեր ծերունի երեցր մեռաւ» :

1. Ասոր ենթական պարզ է թէ բազազրեալ : . . .

2. Ստորագելին ալ բազազրեալ (կամ ընդլայնուած) է : . . .

3. Ինչ յարմար լրացուցիչ կրնաս աւելցնել վրան , եթէ հարցուի երբ մեռաւ .

— «Այսօր» :

«Մեր ծերունի երեցր այսօր մեռաւ» :

4. Ուրիշ ինչ կրնաս հարցնել :

— Ո՞ր մեռաւ :

«Մեր ծերունի երեցր այսօր հոս մեռաւ» :

5. Ուրիշ ինչ կրնաս հարցնել :

— Ի՞նչպէս մեռաւ :

«Մեր ծերունի երեցր այսօր հոս յանկարծ մեռաւ :

Աշակերտները գրեն .

Ա. «Անզգամ տղայք շարաչար կը պատժուին» :

6. Ի՞նչպէս կը պատժուին անզգամ տղայք :

— Չարաչար կերպով :



Գրեցե՛ք Գրքն՝ Եւրեմիայի :

Բ. Ժամացոյցը հիմա զարկաւ :

7. Ժամացոյցը երբ զարկաւ :

— Հիմա :

Գրեցե՛ք Զատ-հեգաթան .

Գ. Մանչերն ու աղջիկները հոս կը կար-  
դան :

8. Ո՞ւր կը կարդան անոնք :

— Հոս :

9. Ի՞նչ կը ցուցնէ « շարաշար » Ա. նախա-  
դասութեան մէջ :

— Կը ցուցնէ « կերպ » :

10. Ի՞նչ կը ցուցնէ « հիմա » Բ. ին մէջ :

— Ժամանակ կը ցուցնէ :

11. Ի՞նչ կը ցուցնէ « հոս » Գ. ին մէջ :

— Տեղ :

Գիտելիք. — Կերպ (Ինչպէ՞ս), ժամանակ (Երբ),  
տեղ (Ուր) ցուցնող բառերը ընդհանուր անունով  
պարագայ կ'ըսուին :

12. Ի՞նչ է պարագայ :

— Կերպ, ժամանակ, տեղ ցուցնող բառերը  
պարագայ կ'ըսուին :

Գիտելիք. — Բայի մը պարագան ցուցնող բառը  
քերականութեան մէջ մակբայ կ'ըսուի :



13. Ի՞նչ է մակբայը :

— Բային մէկ պարագան ցուցնող բառը  
ՄԱԿԲԱՅ կ'ըսուի :

14. Վերի օրինակներէն հետեւցնելով մակ-  
բայները նախադասութեան ո՞ր մասին լրացուցիչ-  
ները կ'ըլլան :

— Ատրոզելիին :

---

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Զ Գ .

Ա. Հետեւեալներուն մէջ մակբայները ստորագծէ :

1. Հովը սաստիկ կը փչէ : — 2. Այսօր այգիիս մէջ  
գործէ : — 3. Վարդուհին կանուխ կ'ելլէ : — 4. Փոքր  
աղջիկը շատ կամաց կը քալէ : — 5. Անձրեւը յանկարծ  
սկսաւ : — 6. Վաղը քննութիւն ունինք : — 7. Եղբայրս  
ուշ հասաւ : — 8. Ձին արագ կը վազէ : — 9. Պետրոս  
դառնապէս լացաւ, երբ դուրս ելաւ : — 10. Երէկ շա-  
րունակ ձիւն տեղաց :

Բ. Վերոյգրեալ մակբայները բային ո՞ր պարագան  
կը ցուցնեն, բերնուց ըսէ :

Գ. Հետեւեալ նախադասութեանց պարզ ստորոգե-  
լիներուն վրայ մակբայ լրացուցիչներ աւելցուր :

1. Եղբայրս կը կարգայ (ի՞նչպէս) : — 2. Մենք ա-  
մէնքս պիտի ուտենք (ո՞ւր) : — 3. Մեր դպրոցը գոցուե-  
ցաւ (ե՞րբ) : — 4. Կինը պոռաց (ո՞րչափ) : — 5. Մարիամ  
կ'երգէ (ի՞նչպէս) : — 6. Տուն մը բռնկեցաւ (ի՞նչպէս,  
ո՞ւր եւ ե՞րբ) : — 7. Վարժապետը քաղաքավար անձ մըն  
էր (ո՞րքան քաղաքավար) : — 8. Սենեակը խաւար է  
(ո՞րքան) : — 9. Օղը սաստիկ տաք է (ո՞րքան սաստիկ) :  
— 10. Քարոզիչը խօսեցաւ (ի՞նչպէս) :

---



ՀՐԱ. ՀԱՆԳ. 25.

Ա. Հետեւեալ նախադասութեանց ստորագելիները ընդլայնէ այնպիսի մակբայներով որ յարմար լրացուցիչներ ըլլան :

1. Եղբայրս Պետրոս լացաւ : — 2. Հիւսիսային հովը կը փչէ : — 3. Եղբորս հետ տունէն բաժնուեցանք : — 4. Յակոբ կը պարտի : — 5. Պարտէզին ծաղիկները կը բուրեն : — 6. Երկու ժամ անցաւ : — 7. Լուսինը կը շողշողայ : — 8. Մեր եկեղեցին գացինք : — 9. Աշակերտը դպրոց կ'երթայ :

Բ. Հետեւեալ նախադասութեանց կմախֆը գտիր, այսինքն բոլոր լրացուցիչները դուրս ձգելով միայն պարզ ենթական եւ լրացուցիչը առ :

Օրինակ. — Այսօր մեր դպրոցի անբողջ աշակերտները *սօնին հանդիսաւոր ցնծութեան շահ ուրախացան* :

Կմախֆ. — « . . . աշակերտները . . . ուրախացան » :

1. Մեր բարեխնամ Օգոստոսիան Վեհապետը իր գահակալութեան տարեդարձին առթիւ կարգ մը բանտարկեալներ ազատ արձակեց :

2. Աստուած բարի մարդիկը կը վարձատրէ թէ՛ այս աշխարհի մէջ եւ թէ՛ յաւիտենականութեան մէջ :

---

ՀՐԱ. ՀԱՆԳ. 26.

Ա. Հետեւեալներուն մէջ կէտերուն տեղ յարմար մակբայներ գտիր եւ դիր :

1. Ես . . . տեսայ ձեր բարեկամը : — 2. Ծերունի հիւանդը . . . աղէկ է : — 3. վարդապետը . . . տուն քաշուեցաւ : — 4. Այս խնձորը . . . կարմիր է : — 5.



Ընկերս սպասեց ինձի հետ . . . քանզի ես . . . կը վախ-  
 նայի : — 6. Այս տիկինը . . . կը հագուի : — 7. Անիկա  
 . . . կ'այցելէ աղքատները եւ . . . ընծաներով կ'ուրա-  
 խացնէ զանոնք :

Բ. Վերի ամբողջացուցած նախադասութիւններուդ  
 բառազննութիւնը կատարէ բերանացի եւ գրաւոր :

Օրինակ . — Բէրանացի Բառազննութիւն :

«Ես առաւօտուն տեսայ ձեր բարեկամը» :

«Ես» դերանունն է, որովհետեւ անուան մը տեղ  
 դրուած է :

«Առաւօտուն» մակբայ է, քանզի «տեսայ» բային  
 (ժամանակ) պարագան կը ցուցնէ :

«Տեսայ» բայ է, ծանօթ պատճառաւ :

«Ձեր» նոյնպէս դերանունն է :

«Բարեկամը» անունն է, քանզի իր մը կը ցուցնէ :

Օրինակ . — Գրանոր Բառազննութիւն :

1. Իմաստուն մարդիկ միշտ ազնիւ անձեր ըլլալու  
 են, վասնզի ամեն մարդ զանոնք կը յարգէ :

2. Իմաստուն մարդը անգամ երբեմն կրնայ սխա-  
 շիլ. միայն Աստուած անսխալ է :

ԱՆՈՒՆ	ԴԵՐԱՆՈՒՆ	ԲԱՅ	ՄԱԿԲԱՅ	ԱԾԱԿԱՆ
Մարդիկ Անձեր Մարդ Մարդը Աստուած	Չանոնք	Ըլլալու են Կը յարգէ Կրնայ Սխալիլ է	Միշտ Անգամ Երբեմն Միայն	Ազնիւ Ամէն Իմաստուն Անսխալ





## ԴԱԱ ԻԵ.

### ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Գրէ նախադասութիւն մը որ բաղկանայ միայն երկու բառերէ — անուն և թայ :
2. Գրէ նախադասութիւն մը, որ բաղկանայ երկու բառերէ — Դերանուն և թայ :
3. Գրէ երկու իրարու միացած նախադասութիւններ, որ պարունակեն երեք բառեր — Անուն, դերանուն, թայ :
4. Գրէ նախադասութիւն մը, որ բաղկանայ երեք բառերէ — Ածական, անուն, թայ :
5. Գրէ նախադասութիւն մը որ բաղկանայ չորս բառերէ . — Ածական, անուն, թայ, մակ-թայ :

---

## ԴԱՍ ԻԶ.

### ՅՕԴՈՒԱԾՈՅ ԼՐԱՑՈՒՑԻԶՆԵՐ

1. Ո՞ր բառերը կը գործածուին ենթակայի համար :  
— Անուն կամ դերանուն :
2. Ո՞ր տեսակ բառեր ստորոգելին համար :  
— Բայ :



Գիտողութիւն. — Աստուծոյ կը կազմեն նախադասութեան կմախքը :

3. Ո՞ր բառերը ենթակային կամ ատորոգելին լրացուցիչը կը կազմեն :

— Ածականը եւ մակբայը :

Գրեցէք՝ «Մեր սանը դռնը բացուեցաւ» :

4. Ո՞ր դուռը բացուեցաւ :

— «Մեր սանը» :

5. Սոյն երկու բառերը մէկանց ո՞ր տեսակ բառի կը համապատասխանեն :

— Ածականի :

Գրեցէք՝ «Պարսէզին կից տունը փշաւ» :

6. Ո՞ր տունը փշաւ :

— «Պարսէզին կից» :

7. Այս երկու բառերը ի՞նչ դեր կը կատարեն : . . .

Գրեցէք՝ «Գրիչս սեղանին սակ գործեցաւ» :

8. Ո՞ր գործեցաւ գրիչս :

— «Սեղանին սակ» :

9. Ի՞նչ կը ցուցնեն «սեղանին սակ» բառերը :

— Տեղ :

10. Տեղ ցուցնող բառերը որո՞նք են :

— Մակբայները :

11. Ուրեմն յիշեալ երկու բառերը — «սեղանին սակ» — ո՞ր բառի զօրութիւն ունին :

— Մակբայի :



ՈՒՐԻՇ ՄԱԿՔԱՅԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

“Եղբայրս ինձի շափ արագ կրնայ վազել” :

“Քրոջս համար սէր ունեցող աղջիկը փոխ  
եկաւ” :

12. Ո՞րչափ արագ, ի՞նչ բանի սէր ունե-  
ցող : . . .

Դիտողութիւն. — “Ինձի շափ” և “փրոջս հա-  
մար կրկին բառերը “արագ” մակբայը և “սէր  
ունեցող” ածականը կը լրացնեն, ուստի մակ-  
բայի ոյժ ունին :

Դիտողութիւն. — Կը տեսնուի թէ յիշեալ կա-  
պակցեալ բառերը ածականի և մակբայի մտօք թէ՛  
ենթակայի և թէ՛ ստորոգելիի լրացուցիչներ կ’ըլ-  
լան : Այս տեսակ լրացուցիչներ յօդուածոյ կ’ըսուին :

13. Ի՞նչ է յօդուածոյ լրացուցիչը :

— Երբ երկու բառեր միասին ածականի մը  
կամ մակբայի մը իմաստը կը յայտնեն՝ կ’ըսուին  
ՅՕԴՈՒԱԾՈՅ ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐ :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 27 .

Ա. Հետեւեալ նախադասութեանց մէջ յօդուածոյ  
լրացուցիչները գծով մը միացուր եւ ըսէ թէ ածականի՞  
թէ մակբայի՞ զօրութիւն ունին :



Օրինակ . — «Ծառին վրայի թռչունը գլխուս վրայ  
ինկաւ» :

Ո՞ր թռչունը — «ծառին վրայի», ածականի ոյժ  
ունի :

Ո՞ւր ինկաւ — «գլխուս վրայ», մակրայի ոյժ ունի :

1. Գործաւորը սանդուխներէն վեր ելաւ : — 2. Սե-  
ղանին քովի գիրքը բեր : — 3. Պատին վրայի քարը  
փրթաւ : — 4. Ճրագին մէջի իւղը սպառեցաւ : — 5. Աշա-  
կերտները դպրոցին շուրջը պտրտեցան : — 6. Գառնուկը  
ոչխարին ետեւէն կը վազէ : — 7. Ապուրը հագուստ-  
ներուս վրայ թափեցաւ : — 8. Ճամբուն վրայ երկու  
կոյրեր տեսանք : — 9. Ձին մրրիկի պէս անցաւ :

Բ. Վերի նախադասութեանց վերլուծման գրաւոր  
ձեւերը շինէ :

ՕՐԻՆԱԿ Ա.

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		
Լրաց. Ենթակ.	Պարզ Ենթ.	Պարզ Ստորոգելի
Մեր <u>սանր</u>	դուռը	ինկաւ

ՕՐԻՆԱԿ Բ.

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ	
Լրաց. Ենթակ.	Պարզ Ենթ.	Լրաց. Ստորոգելի	Պարզ Ստոր.
Եղբորս <u>գրչին</u>	ծայրը	Սենեակին <u>մէջ</u>	ինկաւ



ՕՐԻՆԱԿ Գ.

ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ		
Պարզ Ենթակայ	Լրացուցիչ Ստորոգելի	Պարզ Ստորոգելի
Դուն	այսօր այգիիս մէջ	գործէ

ՕՐԻՆԱԿ Դ.

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ	
Լրացուցիչ Ենթակայի	Պարզ Ենթ.	Լրաց. Ստոր.	Պարզ Ստոր.
Քրոջս համար սէր ունեցող	աղջիկը	ձեր քով	եկաւ

ԴԱՍ ԻԷ.

ՈՒՐԻՇ ԼՐԱՑՈՒՑԻԶՆԵՐ — ՅԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ

(Դասապահն գիրք յը դնելով գրասեղանին շրայ կամ Բռնելով գրասեղանին քակը, վեր, վար, Լայն).

1. Ի՞նչ յարաբերութիւն ունի այս գիրքը սեղանին հետ :

— Գիրքը սեղանին վրայ է :



2. Ի՞նչ յարաբերութիւն ունի հիմա :

— Սեղանին *սակն* է :

3. Հիմա՞ : — Սեղանէն *վեր* : Հիմա՞ : — Սեղանէն *վար* : Հիմա՞ : — Սեղանին *ֆոյ* :

4. Ասոնց մէջ որ բառերն էին որ յարաբերութիւնը կը ցուցնէին սեղանին հետ :

— «Վրայ, *սակը*, *վեր*, *վար*, *ֆոյը*» :

5. «Սեղանէն *վեր*», «սեղանէն *վար*», և այլն ի՞նչ տեսակ լրացուցիչ կ'անուանես :

— Յօդուածոյ լրացուցիչ :

6. Արդ այդ յօդուածոյ լրացուցիչը որո՞ւ կը վերաբերի, զորօրինակ, «Գիրքս սեղանին վրայ դրի» :

— Ստորոգելիին :

Զեջէ «*վրայ*», բառը և *կարդա՛* :

— «Գիրքս սեղանին . . . դրի» :

7. «Սեղանին», լրացուցիչ եղա՞ւ այժմ :

— Ոչ :

8. Ուրեմն որ բառն է որ «սեղանը», կը կցէ «դրի», ստորոգելիին և անոնց յարաբերութիւնը կը ցուցնէ :

— «Վրայ» :

Գիտելիք. — Այն բառերը որ կը կցեն անուն մը կամ դերանուն մը ուրիշ բառի մը հետ և անոնց միջեւ եղած յարաբերութիւնը կը ցուցնեն՝ քերականութեան մէջ կը կոչուին Յեսադորութիւն :



9. Ի՞նչ է յետադրութիւն :

— ՅԵՏԱԴՐՈՒԹԻՒՆՆ Է այն բառը որ կը կցէ անուն մը ուրիշ բառի մը հետ եւ կը ցուցնէ անոնց միջեւ եղած յարաբերութիւնը :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 28 .

Ա. Հետագայ նախադասութեանց յետադրութիւնները ստորագծէ, եւ ուրիշ գծով մը միացուր այն բառերը զորս յետադրութիւնը իրարու հետ կը միացնէ :

Օրինակ. — «Հովիւները դաշտին մէջ հօտը կ'արածեն» :

1. Տղայք տանը բոլորտիքը կը դառնան : — 2. Ժողովուրդը դէպ ի եկեղեցի կը յառաջանայ : — 3. Հովանուտ ծառին ներքեւ կը նստիմ : — 4. Դասատուն եկաւ աշակերտներուն հետ մէկտեղ : — 5. Կատուն ու ձագը իրարու հետ կը խաղան : — 6. Մեր տունը լերան ստորոտը շինուած է : — 7. Մեր դպրոցը ձերինին պէս բարձր շէնք մըն է :

Բ. Վերի նախադասութեանց մէկ քանին բերանացի վերլուծէ :

Օրինակ Ա. — Խեղճ գործաւոր մը պատիւն վրային մինչեւ վար ինկաւ :

1. Պարզ ենթակայ. — «Գործաւոր»,
2. Ածական Լրա. ենթ. — 1. «Խեղճ», 2. «մը»,
3. Պարզ Ստորոգելի. — «Ինկաւ»,
5. Մակբայ Լրացուցիչ. — 1. «Պատիւն վրային», 2.



«մինչեւ վար» . ( քանզի իբրեւ յօդուածոյ լրացուցիչ մակբայի զօրութիւնս ունի ) :

ԳՐԱԻՈՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ			ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ	
Լրա. Ենթ.	Պարզ Ենթ.	Լ. Ե.	Մակբայ Լրաց. Ստորոգելի	Պարզ Ստոր.
Խեղճ	գործաւոր	մր	պատին վրայէն մինչեւ վար	ինկալ

Օրինակ Բ . — « Խեղճ հիւանդ տղան անհնարին տազնապներու մեջ մեռաւ » :

1. « Տղան » — Պարզ ենթակայ :

2. « Խեղճ հիւանդ » — Ածական լրացուցիչ ենթակայի :

3. « Խեղճ հիւանդ տղան » — Բաղադրեալ ենթակայ :

4. « Մեռաւ » — Պարզ ստորոգելի :

5. « Անհնարին » — Ածական լրացուցիչ . « տազնապներու » ն .

6. « Տազնապներու մեջ » — Մակբայ Լրացուցիչ ստորոգելի ( քանզի ո՞ւր կամ ի՞նչպէս մակբայի ոյժ ունի , իբր յօդուածոյ լրացուցիչ ) :

7. « Անհնարին տազնապներու մեջ մեռաւ » — Բաղադրեալ ստորոգելի :



ԳՐԱԻՈՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԾԻԻՆ

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆԹԱԿԱՅ		ԲԱՂԱԴՐԵԱԼ ՍՏՈՐՈԳԵԼԻ	
Բաղ. Լր. Ենթ.	Պարզ Ենթ.	Բաղաղ. Լրաց. Ստորոգելի	Պարզ Ստոր.
Խեղճ հիւանդ	Տղան	անհնարին սագնապներու մէջ	մեռաւ

Գ. Նոյն նախադասութեանց բառազննութիւնը ըրէ բերանացի եւ գրաւոր :

Բերանացի Բառազննութիւն

«Խեղճ հիւանդ տղան անհնարին սագնապներու մէջ մեռաւ» :

(Միւս բառերը ըստ նախընթաց օրինակներուն) :

«Տագնապներու մէջ» — յօդուածոյ մակրայ է. «մէջ» — բառ մըն է որ կը միացնէ «տագնապներու» անունը մեռաւ բային հետ եւ կը ցուցնէ յարաբերութիւնը անոնց միջեւ. ուստի «մէջ» յետադրութիւն է, եւայլն :

Գրաւոր Բառազննութիւն

«Այն աշակերտը որ բնաւ դպրոցէն դուրս չելլեր՝ անոր կը հաւնիմ» .

ԱՆՈՒՆ	ԴԵՐԱՆՈՒՆ	ԲԱՅ	ՄԱԿԲԱՅ	ԱԾԱԿԱՆ	ՅԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ
Աշակերտը Դպրոցէն	Որ Անոր	Չելլեր կը հաւնիմ	Բնաւ	Այն	Դուրս





# ԴԱՍ ԻԸ.

## ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Իբ ճը նկարագրէ հետեւեալ հարցո՝ ծեբուն պատաս-  
խանելով :

1. Ի՞նչ յատկութիւն ունի :
2. Ի՞նչ բանէ կը շինուի :
3. Ո՞ւր կը գտնուի :

### Օրինակ . — Փղոսկր

1. Փղոսկրը կարծր է, և .
  2. Ճերմակ գոյն ունի .
  3. Կ'առնուի փիղերու ժանիքէն .
  4. Կը գտնուի Ասիոյ և Ափրիկէի մէջ :
- Միացո՛ցէ՛ .

Փղոսկրը որ կարծր ու ճերմակ է, կ'առնուի փիղերու ժանիքէն և կը գտնուի Ասիոյ և Ափրիկէի մէջ :

Նոյն կերպով շինէ հետեւեալները .

1. Ածուխ : — 2. Ոսկի : — 3. Կաթ : — 4. Գինի :





## ԴԱՍ ԻԹ.

ԲԱՌԵՐՈՒ ԵՒ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆՑ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

### Շ Ա Ղ Կ Ա Պ

(Աշտիկեաներէնէն) «Սրբուհի կրնայ երգել» :

1. Ուրիշ ո՞վ կրնայ երգել :

— «Լուսնթագ կրնայ երգել» :

2. Այս երկու նախադասութիւնները կրնան  
միացնել :

Ա. — «Սրբուհի եւ Լուսնթագ կրնան երգել» :

3. Ի՞նչ բառ աւելցնելով կապեցիր զանոնք :

— «Եւ» :

(Իւրջեալ գրեցէ՛ք) .

Բ. — Տղան ելաւ եւ աղջիկը իջաւ :

4. Այս խօսքը քանի՞ նախադասութիւն կը  
պարունակէ և ինչո՞վ կապուած են անոնք :

— Երկու. կապուած են «եւ» բառով :

5. Ա. նախադասութեան մէջ «եւ» բառը ի՞նչ  
բան կապած է :

— Երկու բառեր :

6. Բ. նախադասութեան մէջ «եւ»-ը ի՞նչ կա-  
պած է :

— Երկու նախադասութիւններ :



Գիտելիք . — Այս կարգի բառերը որ նախա-  
դասութիւններ կամ բառեր իրարու հետ կը կապեն  
կրնան կոչուիլ կապող բառեր , որոնք քերական-  
նութեան մէջ շաղկապ կը կոչուին :

7. Ի՞նչ է Շաղկապ :

— Կապող բառերը կ'ըսուին Շաղկապ :

Հ Ր Ա Հ Ա Ն Դ 29 .

Ա . Նշանակէ շաղկապները եւ ըսէ թէ նախադա-  
սութիւններ կցած են թէ բառեր , եւ ի՞նչ տեսակ բա-  
ռեր :

ՕՐԻՆԱԿ Ա .

«Երեկ անձրեւ եկաւ , ուսի ժամ չգացի :

Շաղկապ — «ուսի» , միացուցած է երկու նախա-  
դասութիւններ :

ՕՐԻՆԱԿ Բ :

Տղան եւ աղջիկը եկան :

Շաղկապ — «եւ» , կապած է երկու անուններ :

1. Նա կը սիրէ զիս ու ես զանիկա կը յարգեմ :
2. Հպարտ թէպէտ գեղեցիկ դէմք մը ունէր :
3. Անոնք խնձոր ունին իսկ մենք խաղող :
4. Աղքատ բայց համեստ ծնողք մը ունիս :
5. Աղջիկը դպրոց չգնաց , քանզի հիւանդ էր :
6. Ես ու ինք միասին գացինք :
7. Գէորգ գնաց իմ քովէս եւ քու քովէդ :
8. Գէորգ եւ ես խաղացինք :
9. Հայրը ու մայրը աղքատ են :



- 10. Թռչունը կը թռչի եւ կ'երգէ :
  - 11. Վարժապետը ազգու բայց մեղմ կարդաց :
  - 12. Դուք հրամայեցէք որ (որպէս զի) ես նամակը գրեմ :
  - 13. Այսօր կամ վաղը վկայական կ'առնեմ :
  - 14. Ոտքիդ ցաւը անցաւ եւ տակաւին կուլաս :
- Բ. Կէտերուն տեղ յարմար շաղկապներ դիր :
- 1. Տարօրինակ կը կարդայ . . . փոքր է : — 2. Սա-  
չատուր նստաւ . . . անիկա գործը աւարտեց : — 3. Յակոր  
. . . ես դասընկեր եմք : — 4. Պարտէզը միայն հաճելի չէ,  
. . . օգտակար է : — 5. Հայրը մեռաւ . . . սգաւոր է :  
— 6. Դասս այնքան դիւրին է . . . ջանք չուզեր : —  
7. Կը քնանամ . . . յոգնած եմ : — 8. Եղբայրս կը կան-  
չեմ . . . պատասխան ընդունիմ :



## ԴԱՍ Լ.

### ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Աշակերտները գրաւոր պատասխանեն հետեւե-  
լալ հարցումներուն պայմանաւ որ նախադասու-  
թիւնները թերի չըլլան :

#### ՕՐԻՆԱԿ

Հարցում. — Դիւրութեան համար բառերը ինչ  
ըրած են : . . .



Պատասխան . — Դիւրութեան համար բառերը  
քանի մը կարգերու բաժնած են :

1. Իրերը ի՞նչպէս կը ճանչնանք : . . .
2. Ամէն իր զգայարանքով կ'իմացուի : . . .
3. Ո՞ր տեսակ բառ կրնայ լրացուցիչ ըլլալ  
ենթակայի և լրացուցիչի : . . .
4. Մակբայը ենթակայի լրացուցիչ կրնայ ըլ-  
լալ : . . .
5. Գրէ երկու նախադասութիւններ և յետոյ  
վերածէ մէկի՝ շաղկապ մը գործածելով : . . .
6. Սա նախադասութեան շաղկապը վերցնելով  
երկու նախադասութիւն կազմէ — հայրս եւ քոյրս  
հիշանդ են :
7. Մինչեւ հիմա քանի՞ տեսակ բառ սորվե-  
ցար , կարգաւ գրէ : . . .

---

## ԴԱՍ ԼԱ.

### Մ Ի Զ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Աշակերտները գրեն .

1. Աւանդ , կասուս պասուսանէն փախար :
2. Ա՛խ , ե՞րբ դասս աղէկ պիտի սերսեմ :
3. Օ՛հ , զա՛սիկը նորէն մօտեցար :



1. «Առաջ» բառը ինչ կը ցուցնէ հոս :

— Ցաւի զգացում կը ցուցնէ հոս :

2. Ինչ կը ցուցնէ «ախ» :

— Փափաք կը ցուցնէ :

3. Ինչ կը ցուցնէ «օհ» :

— Ուրախութեան զգացում կը ցուցնէ :

**Գիտելիք.** — Այս կարգի բառերը որ զօրաւոր և յանկարծական զգացում կը յայտնեն, կրնան կոչուիլ զգացում ցուցնող բառեր :

Քերականութեան մէջ զգացում ցուցնող բառերը միջարկութիւն կոչած են :

4. Ինչ է միջարկութիւն :

— ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ կ'ըսուի զգացում ցուցնող բառերը :

**Գիտելիք Ա.** — Այս դասակարգին վերաբերող բառերը նախադասութեան մէկ մասը չեն կազմեր, քանզի անոնք ուրիշ բառերու հետ միանալով նախադասութիւնը ամբողջացնելու չեն ծառայեր, այլ յանկարծական յուզում մը յայտնելու համար խօսքին մէջ կը ձգուին, ինչպէս կը նշանակէ անունը (միջարկութիւն), ասոր համար է որ միշտ կէտերով կը բաժնուին :

**Գիտելիք Բ.** — Միջարկութեան բառերուն վրայ նշան մը (՛) կը դրուի որ երկար կը կոչուի :



Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ. 30.

Նշանակէ միջարկութիւնները եւ ըսէ թէ ի՞նչ տե-  
սակ զգացում կը ցուցնեն :

1. Ի՞նչ, դուն իմ բարեկամ մս ես : — 2. Երանի՛ քեզի  
որ մաքուր եւ ուրախ սիրտ մը ունիս : — 3. Բայց, աւա՛ղ,  
այժմ պզտիկ քոյրս կը հանգչի ցուրտ հողին տակ : — 4.  
Շատ անգամ խրատեցի աղջիկս, այլ, աւա՛ղ, վերջապէս  
պատիժը կրեց : — 5. Մայրս, ո՛հ, ե՞րբ պիտի հոս հասնի :  
— 6. Վա՛յ քեզ կեղծաւոր աղջիկ : — 7. Բե՛հ, ով կը  
վախնայ մութէն : — 8. Տեսայ զինքը, ափսո՛ս, շատ  
հիւանդ էր : — 9. Վա՛շ, որ տաճարը կը քակէիր : — 10.  
— Վարժապետիդ անհնազանդ եղար, օ՛խ, հիմա պատ-  
ժուէ : — 11. Վա՛խ, վերջապէս մայրը մեռաւ :

---

ԴԱՍ ԼԲ.

Հ Ա Ն Դ Է Ս

Ա. Բառերուն դասակարգը.

1. Իր ցուցնող բառեր (ԱՆՈՒՆ). — Տուն,  
մայր, կաթ, ևայլն :
2. Անունի տեղ դրուող բառեր (ԴԵՐԱՆՈՒՆ).  
— Ես, դու, մենք, ևայլն :
3. Բան մը ըսող բառեր (ԲԱՅ). — Կը կար-  
դամ, կը գրեմ, կը խաղամ, ևայլն :



4. Պարագայ ցուցնող բառեր (ՄԱԿԲԱՅ) . —  
Հոս , հիմա , շուտ , ևայլն :

5. Յասկուրթիւն ցուցնող բառեր (ԱԾԱԿԱՆ) .  
— Բարի , մեծ , նոր , ևայլն :

6. Յարաքերուրթիւն ցուցնող բառեր . (ՅԵ-  
ՏԱԴՐՈՒԹԻՒՆ) . — Վրայ , տակ , մէջ , ևայլն :

7. Կապող բառեր (ՇԱՂԿԱՊ) . — Եւ , ու ,  
քանզի ևայլն :

Զգացում ցուցնող բառեր (ՄԻԶԱՐԿՈՒԹԻՒՆ) .  
— Աւանդ , ոհ , էհ , ևայլն :

Վերը նշանակուած ուրի տեսակ բառերը  
ընդհանուր անունով կը կոչուին ՄԱՍՈՒՆԻՔ ԲԱՆԻ  
որ կը նշանակէ խօսքի կտրուներ :

Բ. Բառերուն պաշտօնը նախադասութեան  
մէջ :

Անուն } Ա. Ենթակայ — 1. գիրք հինցաւ :  
Դերանուն } 2. Անոնք խաղացին :

Բ. Լրացոցել ենթակայի . — Պատիւ քարը  
ինկաւ : 2. Անոր ծառը չորցաւ :

Գ. Լրացոցել «որոգելի» . — 1. Կարդացի  
այն գիրքը : 2. Գրիչը անոր տուաւ :

Բայ . — Սորոգելի . — Ճրագը վարեցաւ :

Մակբայ . — Ա. Լրացոցել «որոգելի» . — Շուտ վա-  
զեց . — Բ. Լրացոցել . 1. հակայի . — Շատ  
շուտ վազեց : — 2. Ածականի . — Յոյժ գե-  
ղեցիկ ձայն ունէր :



Ածական . — Լրացուցիչ անուններու , նախադասութեան ու է մասին մէջ — ենթակային կամ ստորոգելիին : — 1. ենթակայի մասին մէջ . — « գեղեցիկ ձայնալսեցիր » : 2. ստորոգելի մասին մէջ . — « Գեղեցիկ ձայնով կ'երգէր » :

Յետադրութիւն . — Անունի կամ դերանունի մը հետ միացած իբր յօդուածոյ Լրացուցիչ Ա. « Գեղեցիկ » . — « Քոյրս ինծի հետ կ'երթար » : Բ. Լրացուցիչ 1. անունի . — Քեզի պէս աշակերտ չունիմ » . 2. Ածականի . — « Վարդի պէս գեղեցիկ դէմք ունէր » :

Շաղկապ . — Կը ծառայէ իբր կապ միացնելով . 1. Բառեր . — « Ես ու Յակոբ բարեկամ ենք » : 2. Նախադասութիւններ . — « Արեւը ծագեցաւ և օդը տաքցաւ » :

Միջարկութիւն . — . . . . :

**Հ Ր Ա Հ Ա Ն Գ 3 1 .**

Ա . Ստորեւ տրուած օրինակին պէս գծեր քաշէ եւ հետեւեալ նախադասութիւնները կազմող մասն բանիներուն իւրաքանչիւրը իր կարգին մէջ գրէ :

**Օ Ր Ի Ն Ա Կ**

Փոքրիկ տղան աներկիւղ կամուրջէն վար ցատքեց եւ , աւա՛ղ , իր մէկ ոտքը կոտրեցաւ :



ԱՆՈՒՆ	ԴԵՐ-ԱՆՈՒՆ	ԲԱՅ	ՄԱԿԲԱՅ	ԱԾԱԿԱՆ	ՅԵՏԱԴԲ.	ՇԱՂ-ԿԱՊ	ՄԻՋԱՐ-ԿՈՒԹԻՒՆ
Տղան Կամուրջէն Ոսիր	Իր	Ցասեց Կոսրեցաւ	Աներկիւղ	Փոքրիկ Մէկ	Վար	Եւ	Աւանդ

1. Սիրուն թռչունները ո՛րչափ անուշ կ'երգեն անտառին մէջ :

2. Կապոյտ աչքերով, դանդուր մազերով տղայ մը տեսայ որ կուլար, քանզի ձեռքէն ինկած էր մեծ խաղաղիկ մը եւ կոտորած էր :

3. Այսօր հայրս մեզի համար գնեց սեւ աղուոր ձի մը որ կարծես թռչունի պէս կը թռչի՝ երբ կը վազէ :

4. Աշխատասէր մեղուն քանի՛ աշխուժիւ հիւթ կը քամէ ամէն բացուած ծաղիկէ եւ ձմեռուան համար մեղր կը շինէ փեթակին մէջ :

5. Կապիկը կ'ուտէ ընկոյզ եւ կաղին, եւ յաճախ յոյժ զուարճալի խաղեր կ'ընէ :

Բ. Հետագայ օրինակին պէս կազմէ նախադասութիւններ որ սկսելով անունէն եւ քայէն հետզհետէ պարունակեն ութը մասունք բանի :

### ՕՐ Ի Ն Ա Կ

1. Տղայք կը գրեն : (Անուն եւ բայ :)

2. Ուշիւմ տղայք կը գրեն : (Ածական մը աւելցած :)

3. Ուշիւմ տղայք կը գրեն խնամով : (Մակբայ աւելցած :)



4. Ուշիմ տղայք կը գրեն խնամով եւ կը սորվին :  
(Շաղկապ մը աւելցած :)

5. Ուշիմ տղայք կը գրեն խնամով եւ անոնք կը սոր-  
վին : (Դերանուն մը աւելցած :)

6. Ուշիմ տղայք խնամով կը գրեն դպրոցին մէջ եւ  
անոնք կը սորվին : (Յեսադրութիւն աւելցած :)

7. Ուշիմ տղայք խնամով կը գրեն դպրոցին մէջ եւ  
օ՛հ, ի՛նչ շուտով անոնք կը սորվին : (Միջարկութիւն ա-  
ւելցած :)

Ա. Թռչունները կը թռչին :

Բ. Ձին կը վազէ :

Գ. Յակոբ կ'երգէ :

## ԴԱՍ ԼԳ.

### ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՈՒԹԸ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻՆԵՐՈՒ

- |                 |           |                                     |
|-----------------|-----------|-------------------------------------|
| 1. Անուն        | կը ցուցնէ | իր մը :                             |
| 2. Դերանուն     | ”         | անուն մը, որուն դերը<br>կը կատարէ : |
| 3. Բայ          | ”         | ընդհանրապէս գործու-<br>ղութիւն մը : |
| 4. Մակբայ       | ”         | բային մէկ պարագան :                 |
| 5. Ածական       | ”         | յակութիւն :                         |
| 6. Յեսադրութիւն | ”         | յարաբերութիւն :                     |
| 7. Շաղկապ       | ”         | կապակցութիւն :                      |
| 8. Միջարկութիւն | ”         | զգացում կամ յուզում :               |



# ԴԱՍ ԼԴ.

## ՔՆՆՈՒԹԻՒՆ

1. Ի՞նչ է նախադասութիւն :
2. Խորհէ ծովուն վրայ և շինէ նախադասու-  
թիւն մը :
3. Ի՞նչ է բառ :
4. Ըսէ ձայնաւոր գրերուն անունները :
5. Ի՞նչ է իր :
6. Լեզուին բոլոր բառերը քանի՞ դասակարգի  
կը բաժնուին :
7. Քերականութիւնը ի՞նչ ուսում կ'աւանդէ  
(Դ... Գ.) :
8. Ի՞նչ է ենթակայ, ի՞նչ է ստորոգելի :
9. Քանի՞ տեսակ ենթակայ և ստորոգելի կայ :
10. Ի՞նչ է մասունք բանի :
11. Ի՞նչ է վերլուծում :
12. Ի՞նչ է բառազննութիւն :
13. Որո՞նք են նախադասութեան լրացուցիչ-  
ները :
14. Ի՞նչ կը ցուցնէ անունը, և որն է բայը :
15. Որո՞նք են ամենէն էական բառերը նա-  
խադասութեան համար :
16. Ի՞նչ է դերանուն :
17. Ո՞րն է մակբայ, որն է ածական :
18. Ո՞րն է նախադասութեան մը կմախքը :
19. Որո՞նք են յօդուածոյ լրացուցիչները :
20. Ի՞նչ է յետադրութիւն :



21. Ածականը կրնայ մակբայ ըլլալ . ի՞նչպէս :
22. Ածականը անունէն առանց կը դրուի թէ  
եաքը :
23. Յետադրութիւն բառին նշանակութիւնը  
ի՞նչ է . ինչո՞ւ :
24. Անունը նախադասութեան ո՞ր մասը կը  
կազմէ :
25. Մակբայը որո՞նց լրացուցիչ կ'ըլլայ :
26. Ածականը ո՞ր բառերու լրացուցիչ կ'ըլլայ :
27. Ի՞նչպէս կ'ընդլայնես պարզ նախադասու-  
թիւն մը :
28. Երբ երկու կամ աւելի նախադասութիւն-  
ներ իրարու կապուած մեծ նախադասութիւն մը  
կը կազմեն, ի՞նչ կ'ըսուի անոր :
- Բաղադրեալ նախադասութիւն :
29. Սոյն նախադասութիւնները միացնող կապը  
ի՞նչ կը կոչուի :
30. Շաղկապը միայն նախադասութիւններ կը  
միացնէ :
31. Յիշէ քանի մը շաղկապներ :
32. Իւրաքանչիւր պարզ նախադասութիւն քա-  
նի խորհուրդ կը պարունակէ :
33. Ի՞նչ է միջարկութիւն :
34. Միջարկութիւնը մասն քանի կամ խօսքին  
կտորը կրնայ կոչուիլ իրապէս :
- Ոչ :
35. Միջարկութեան վրայ դրուած նշանը ի՞նչ  
կը կոչուի :

Վ Ե Ր Ջ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻՆ



- ԿԱՍ Ա.** — Ներածական. — Նախադասութիւն :
- » **Բ.** — Բառ :
- » **Գ.** — Քերականութիւն :
- » **Դ.** — Գիր :
- » **Ե.** — Իր :
- » **Զ.** — Իր ցուցնող բառեր :
- » **Է.** — Նախադասութեան մասերը. — Ենթակայ եւ Ստորոգելի :
- » **Ը.** — Վերլուծութիւն :
- » **Թ.** — Բառերու դասաւորութիւնը կամ տեսակները :
- » **Ժ.** — Ենթական եւ իր Լրացուցիչները :
- » **ԺԱ.** — Ստորոգելին եւ իր Լրացուցիչները :
- » **ԺԲ.** — Նախադասութեան երկու էական բառերը. — Անուն եւ  
Բայ :
- » **ԺԳ.** — Հանդէս :
- » **ԺԴ.** — Վարժութիւն շարադրութեան :
- » **ԺԵ.** — Դերանուն :
- » **ԺԶ.** — Ենթակայ, Ստորոգելի եւ Լրացուցիչները :
- » **ԺԷ.** — Բառազննութիւն :
- » **ԺԸ.** — Վարժութիւն շարադրութեան :
- » **ԺԹ.** — Պարզ եւ բաղադրեալ Ենթակայ եւ Ստորոգելի :
- » **Ի.** — Յասկութիւն ցուցնող բառեր :
- » **ԻԱ.** — Ենթակայի եւ Ստորոգելիի Լրացուցիչ. — Ածական :
- » **ԻԲ.** — Վարժութիւն շարադրութեան :
- » **ԻԳ.** — Հանդէս :
- » **ԻԴ.** — Ստորոգելիի Լրացուցիչ. — Մակբայ :
- » **ԻԵ.** — Շարադրութիւն :
- » **ԻԶ.** — Յօդուածոյ Լրացուցիչներ :
- » **ԻԷ.** — Ուրիշ Լրացուցիչներ. — Յետադրութիւն :
- » **ԻԸ.** — Վարժութիւն շարադրութեան :
- » **ԻԹ.** — Բառերու եւ նախադասութեանց կապակցութիւն. —  
Շաղկապ :
- » **Լ.** — Վարժութիւն շարադրութեան :
- » **ԼԱ.** — Միջարկութիւն :
- » **ԼԲ.** — Հանդէս :
- » **ԼԳ.** — Համառօսութիւն ուր Մասունք Բանիներու :
- » **ԼԴ.** — Քննութիւն :









BB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



**\*ERM1013\***

255.07.02.01.06.00/



ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

ՇՐՋԱՆ Ը. — Ստորաբաժանում Բառերու

ՇՐՋԱՆ Գ. — Չեւափոխութիւն Բառերու

Գիւն 2 Ղրճ.

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Վաճառատունը

Թիւ 27, Ֆինաներիւր Եօզուչու, Կ. Պոլիս

معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصتنامہ سیلہ طبع اولتمشدر